

Ա. ԱՐԵՎԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՏԵՏՈՒՏ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԸ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՆ

Գ. ԱՏԵՓԱՆՅԱՆ

ԽԱԶԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԸ ԵՎ ԱՐԵՎԱՆՅԱՅՑ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ամբողջ մեկ հարյուրամյակ հայ հասարակական մտքի զարգացման վրա խոշոր ազդեցություն են թողել մեծ լուսավորիչ կաշատուր Արովյանը և ուռուցիչո՞ն դիմոկրատ Միքայել Նալբանդյանը: Արովյանի և Նալբանդյանի գաղափարները հայ ժողովրդին պայքարի են կոչել տարրեր ժամանակաշրջաններում, տարրեր վայրերում, հասարակական, քաղաքական կյանքի տարրեր պայմաններում: Արովյանն ու Նալբանդյանը սիրված դեմքեր են եղել ինչպես Կոմիտասում, արևելահայ իրականության մեջ, այնպես էլ ամբողջ աշխարհով մեկ ցրված հայ զաղությներում, Թյուրքայից սկսած, մինչև Եվրոպա ու Հնուալիոր Ամերիկա: Բայ որում հարդ է, նշել այն բնորոշ փաստը, որ նրանց անունները գրիքն միշտ միաժամանակ են հիշատակվում արևմտահայ մամուլում:

Արևմտահայ գրականության վրա Արովյանի և Նալբանդյանի ոնենցած ազգեցությունը մի շատ լուրջ հարց է, որը սակայն բավարար չափով գեռ չի լուսաբանվել: Այս հարցի՝ Նալբանդյանին վերաբերող մասը փոքր ինչ լուսաբանված է, մեր գրականագիտության մեջ, սակայն ոչ երբեք սպառիչ շափով: Խայ ինչ վիրաբերում է Արովյանին, ապա հարցը շատ մասնակի, աննշան շափով է, քննության առնված:

Ինչպես Արովյանի, նույնպես և Նալբանդյանի՝ արևմտահայ գրական ու հասարակական մտքի վրա թողած ազգեցության, արևմտահայ գրողների՝ նրանց նկատմամբ ոնենցած վերաբերմունքի բազմակողմանի ու սպառիչ լուսաբանությունը դեռ մնում է, մեր դրականագիտության շվճարված պարաբերից մեկը:

Այս հոգիածում մեր նպատակը չէ քննության առնել արևմտահայ մամուլում և գիշարվեստական գրականության մեջ տեղ գտած

այն բոլոր գնահատումներն ու հիշատակումները, որոնք վերաբերում են և. Արովյանին։ Դժվար է դունել արևմտահայ որևէ պարբերական, որը դունե մի քանի առիթով հիշատակած չլինի Արովյանի անունը, կարծիք հայտնած չլինի նրա այս կամ այն երկիր մասին։

Մեր նպատակն է այստեղ կանգ առնել երեք խնդրի վրա։ Նախ՝ փորձ անել պարզելու Արովյանի գեղարվեստական արձակից «Աշխարհիկ» բարբառ երեանցի հայոց պատառիկի՝ առաջին անգամ «Արշալույս Արարատյան»-ում տպագրվելու հանգամանքները և այդ առթիվ կանգ առնել իզմիրի ու Երևանի հայերի փոխադարձ կապի վրա։ Երկրորդ՝ ցույց տալ թե ինչ ազգեցություն է լլողել և. Արովյանը 60—70-ական թվականների արևմտահայ դեմոկրատական գրողների վրա։ Երրորդ՝ ցույց տալ նաև թե 80—90-ական թվականների արևմտահայ գրողներն ինչպես են գնահատել Արովյանին ու պրոպագանդա արել Արովյանի ու նալբանդյանի գաղափարները Համբիդյան բռնագետության շրջանում։ Մենք այս հոդվածում հարավորություն չունենք անդրադառնալու այն հարցին, թե Արովյանի երկերից ի՞նչ է տպագրվել արևմտահայ մամուկում 1850 թվից հետո։ Հոդվածի սահմանները և ժամանակը թույլ չեն տալիս այդ հարցով ևս զբաղվելու։

I

Խաչատուր Արովյանի անունը առաջին անգամ արևմտահայ մամուկի էջերում երևացել է նրա անհայտացումից երես տարի Հետո՝ 1850 թվականին։ Ինչպես հայտնի է, այդ թվին է, որ իզմիրում հրատարակվող «Արշալույս Արարատյան» պարբերականը տպել է Արովյանից մի հատված «Աշխարհիկ» բարբառ երիանցի հայոց վերնագրով, իր կողմից ավելացնելով միայն հետեւյալ բացարությունը «Գրյալ» ի պատվելի հաշատուր վարժապետն Արովյան։¹

Այդ դրական հատվածը, որի մեջ պատմվում է մի հիվանդ ու թշվառ կնոջ ցույց տրվող օգնության մասին, ըստ էության Արովյանի տպագրված առաջին գեղարվեստական ինքնուրույն ստեղծագործությունն է։

Արովյանի այս գործի «Արշալույս Արարատյան»-ում տպագրվելու փաստը երկար տարիներ անծանոթ է մնացել Արովյանով։

¹ «Արշալույս Արարատյան», 1850 թ. թիվ 360.

պրադլովներին և միայն մեր օրերում է գրավել բանասկըների ուշադրությունը, մտքեր հուզել և զանազան ենթադրությունների տեղի տվիլ: Այսպիսով՝ Արովյանի ծննդյան թիվ, որ անվան անստուգության, իր անհայտացման հանդամանքների անորոշության վրա ավելացել է այդ հասլածի տափագրման կիսաառեղծվածը, ստեղծվել է մի նոր հանդույց, որի լուծումով արժե գրադվել:

Առաջին միտքը, որ գրադեցնում է ուսումնասիրողին, այն է, թե ինչ նպատակով է «Արշալույս Արարատյանը» տպագրել այդ գործը: Արովյանի «Երկերի լիակատար ժողովածիլի» ակադեմիական հրատարակության համապատասխան հատորի ծանոթագրություններում, որտեղ, ի դեպ՝ դրեթե ամբողջովին մեջ է բերվում այն երկար պատմությունը, թե մեր օրերում ով է առաջին անգամ նկատել «Արշալույս Արարատյանի» տպած հոդվածը, բայց չեղատակում ամենից կարևորը՝ «Արշալույս Արարատյանի» բացատրությունը՝ «Գրյալ ի պատվելի Խաչատոր վարժապետէ Ապովյան», այն միտքն է հայտնվում, թե՝ թերթի նպատակն է եղել պարզապես մի նմուշ տալ արեելահայ աշխարհիկ բարբառից: Չժամելով հանդերձ այդ հանդամանքը, մեզ թվում է, թե հիշյալ բացատրությունը կարիք ունի որոշ լրացման Արովյանի նշանած գործը ոչ միայն իր աշխարհաբար լիզվով, այլև իր գաղափարական բովանդակությամբ և գրական մշակմամբ կարող էր գրավել խմբագրության ուշադրությունը և տպագրվել:

Այդ հասման ի՞նչ ճանապարհով է հասել իզմիր, ի՞նչպես է պատահել, որ մինչդեռ Արովյանի կենդանության օրով Կովկասի հայ պարբերական մամուկում հազիվ մի երկու պատափեկ էր տպագրվել նրա երկերից,² հեռավոր իզմիրի լրագրում լույս էր տեսնում նրա ինքնուրույն ստեղծագործությունը իր մահվանից երեսու տարի հետո: Այդ նյութը ինքը՝ Արովյանն է ուղարկել, թե՝ ուղարկել են նրա աշակերտները և կամ թե մի այլ ձևով է այն ընկեր իզմիր: Արովյանի անունն արդյուք «Արշալույս Արարատյանի» խմբագրի Դ. Պալդաղարյանին ծանոթ էր նախքան «Աշխարհիկ բարբառացի» տպագրումը: Մրանք հետաքրքիր հարցեր են, որոնց պատասխանները դեռևս չեն տրված:

¹ Խ. Արովյան, «Երկերի լիակատար ժողովածու», հատոր 4, Երևան, 1947 թ. էջ 320—321.

² «Կովկաս» լրադրի 1846 թ. № 49-ում և 1947 թ. № 1-ում տպված է Խ. Արովյանի «Աղելայիլա» լոկիսի առաջին գործողությունը, այն էլ ոչ լրիվ:

Նախ անհրաժեշտ է պարզել թե ինչպիսի տնտեսական և կուպառութական կապ է եղել Երևանի և Իզմիրի միջև, որը և կըսարանի հայ ժողովրդի արևելահայ և արևմտահայ հատվածների մերձացման փորձերը, կպարզաբանի նաև թե Կարո՞ղ էր Արովյանն անձնական կապեր ունենալ «Արշալույս Արարատյանի» խմբագրության հետ:

Իզմիրը և Երևանը ուղիղ հարյուր տարի առաջ տնտեսական և կուպառութական հարաբերություններ են ունեցել միմյանց հետ: Երբ վաճառում գտնվել են վաճառականներ, որոնց ընտանիքի անդամներից մի քանիսը եղել են Իզմիրում և գրագրություն ունեցել Երևանի հետ: Այդպիսի ընտանիքներից է Մարգար Խոչենցը: Սրա որդին Զաքար Խոչենցը ապրել է Իզմիրում: Երևանաբնակ Մարգար Խոչենցը իր մահվան օրերին զրել է «Կոտակադիր Հոգեշահ բանից» աշխատությունը և ուղարկել Իզմիր՝ իր որդուն, որը այն տպագրի է 1853 թվականին Երուասիդում:

Կան ավելի ուշագրավ փաստեր:

Հայունի է, որ Արովյանի ապրած վերջին տարիներին Դովեկասում լույս էր տեսնում միայն «Կովկաս» պարբերականնը, որը հրատարակվում էր Թիֆլիսում, գրաբար լեզվով և գերազանցապես դրադվում էր առևտորական հարցերով: Գրական անշան թոթովանքներ են միայն տպագրված «Կովկաս»-ի էջերում:

Այդ նույն ժամանակամիջոցում Մ. Թաղիաղյանի խմբագրությամբ Հնդկաստանում լույս էր տեսնում «Ազգասեր Արարատյանը», նույնպես գրաբար լեզվով և մատչելի չէր ընթերցող լայն մասսաներին, չնայած Կովկասում (անշուշտ նաև Երևանում) բառացիում էին այդ պարբերականի համարները:

Մի աշխարհաբար թերթի պահանջը շատ մեծ էր արևելահայերի մոտ և այդպիսի թերթի բացակայության շնորհիվ է, որ «Արշալույս Արարատյանը» ծանոթ էր կովկասահայությանը և լայնորեն տպառվում էր ինչպես Թիֆլիսում, Կովկասի և Հյուսիսային Կովկասի մի շարք քաղաքներում, այնպես էլ Երևանում:

«Կովկաս» թերթը հաճախ արտատպություններ էր կատարում «Արշալույս Արարատյանից», այսպիսով իր ընթերցողներին ծանոթացնելով թե արևմտահայ աշխարհաբար լեզուն և թե ստեղծելով առաջին կուպորական կապը արևմտահայ իրականության հետ:¹

«Արշալույս Արարատյանն» էլ իր հերթին մոտիկից հետաքր-

¹ «Արշալույս Արարատյան»-ից արտատպություններ կան «Կովկաս»-ի 1847 թվի 27, 33, 38 համարներում:

բրովում էր «Կովկաս»-ով և այդ թերթի միջոցով՝ Թիֆլիսի ու Երեւանի կազմութ-կրթական, տնտեսական կյանքով։ Այդ թերթի էջերում տպագրված են Թիֆլիսից ուղարկված նյութեր, արտատպություններ են կատարվել «Կովկասից»։

«Արշալույս Արարատյանը» պարբերաբար իր ընթերցողներին իմացրել է «Ազգաօքը Արարատյան» և «Կովկաս» պարբերականների առացումը։ Երբ 1847 թվականի դեկտեմբեր ամսին դադարում է «Ելովկասը» և մի քանի ամիս «Արշալույս Արարատյանը» անհամբեր սպասելուց հետո համոզվում է, որ կարող է մի քանի պատահած լինի, 1848 թվի հունիսի 9-ին զրում է։

«Թանի մը ամիս կա, Տիֆլիսի «Կովկաս» լրագիրը չի հասնիր իզմիր և չեմք գիտեր թե ինչ է պատճառը այս երկար հապաղման, բայց ցանկալի է մեզ հավատալ թե հիշյալ հայերեն լրագրի հրատարակությունը կշարունակվի միշտու։¹

Առանձնահատուկ ուշադրություն է ներկայացնում այն վերաբերմութը, որ ունեցել է արևմտահայ թերթը Երևանի նկատմամբ։ Մոտիկից Հետարքորդել է Երևանի կուլտուրական, դպրոցական կյանքով, գավառական դպրոցի գործերով, որի տեսուչն էր Խաչատուր Արտյանը։

Միայն 1848 թվականի Հոկտեմբերից ամսին «Արշալույս Արարատյան»-ի խմբադրությունը որոշակի տեղեկանում է «Կովկաս» լրագրի փակման մասին և հայտնում է, իր ընթերցողներին հետեւյալ տողերով։ «ցավալի սրտիվ իմացանք թե Տիֆլիսի «Կովկաս» անուն հայերեն լրագրույն հրատարակությունը դադարել է։ Այս տրամալի լուրը բիշ մը շափակորելու համար արժան կհամարենք հիշյալ թերթին 46-րդ թվույն մեջ եղած հետեւյալ հոդվածը հաղորդել մեր ընթերցողացը»²։

«Արշալույս Արարատյանի» արտատպած ինֆորմացիայի մեջ խոսվում է այն մասին, թե Երևան քաղաքի գավառական դպրոցը մի խրախունելի նախաձեռնություն է կատարել, հիմնել է մի թանգարան, որտեղ ամփոփելու են զանազան էքսպոնատներ, թե այդ թանգարանում արդեն հավաքված են Հայտնությունի հանագային հանագային մասին նմուշներ, ձեռք են բերված հնություններ, այդ թվում Տրդատ Մագավորի տաճարի սյուների մասերը։

Այս հատվածը ցույց է տալիս, որ Երևանի գավառական դըմբոցի մասին իմացել են «Արշալույս Արարատյանի» խմբագիրները։

¹ «Արշալույս Արարատյան», 1848, № 315.

² «Արշալույս Արարատյան», 1848, № 322.

Անկասկած է, որ այդ թանգարանի կազմակերպումը կապվում է դավանական դպրոցի տեսչի՝ հաշատուր Արովյանի անվան հետ, չնայած «Կովկաս» լրագրում տպված և «Արշ. Արարատյան»-ի արտատպաժ ինֆորմացիոն բացակայում է նրա անունը:

Ավելորդ շենք համարում այդ հատվածը ամբողջապես մեջ ընդունված է «Կովկաս»-ից.

«Երևան: Գովութեամբ և ուրախութեամբ հայտնեամբ զրարի խորհուրդ նահանգապետի կողմանս, որ հաստատեաց ի նահանգական դպրոցին երևան զթանգարան, յորում հաւաքել ջանա զամենայն բերս Արարատ գաւառին և արդեն զտանին անդանոր բեկոր ի մի կճեա քարէ և ի ծծմբոյ, որ բերեաւ ի զագաթանէ Ալագիազ* լերին, օքսիդեան, և պղնձահանք աւագւ Առաւել խնդամբ ընդ գեղեցիկ միւս մտադրութիւն սորա, քանզի փութոյ եռանդեամբ դուն դործէ իմ ի վայր հաւաքել զպէսպէս հնութիւնս Հայաստանի, որը սիփիւն և անտերունչ տարածնալ կան յաւերակս քաղաքաց, վանօրենից և շինից, ամեննեին անտես ի մերոց համազգեաց. և ահա այժմին տարեալ են ի նոյն դպրոցն չորս անեարատ պահպանեալ որձաքար կամարակապք Հոյակապ սեանց Արքունեաց Միրս թագաւորի սրբոյն Տրդատա: Ո՞վ աշը հայրենասիրաց, երբ տեսանեն դայսոսակի վէմս; զայսոսիկ նշխարս փառաց մերոյ թագաւորութեան, յո՞ր դարս խորանան երևակայութեամբ զո՞րն ի կորստեանց Հայրենի փառաց ոչ ի յուշ ածեն: Հայրենիք մեր երախտապարտ եղիցին պատվական առնս, որ խորհուրդ ի մտի եղ ազատել ի ժանեաց ժամանակին և ի ձեռաց շինականացն զանդին նշխարս հնութեան մերոյ աշխարհիւ:¹

Անհավանական շենք համարում նաև այն, որ Արովյանը բացի «Աղելայիդայ»-ից, տեղական բնույթի թղթակցություններ էլ է ուղարկել «Կովկաս»-ին, որոնց թվում գուցե և այս լուրը և ներս կաթողիկոսի երևանից անցնելու նկարագրությունը և այլն:

Երևանի պատմությամբ զբաղվողները, այդ թվում և մեծավատակ բանասեր Երվանդ Շահպիզը իր «Հին Երևանը» արժեքավոր ուսումնասիրության մեջ, կեռն իր «Հինուամյակ հայոց հոգևոր թեմական դպրոցի երևանա» ստվարածավալ գրքում, խոսելով Արովյանի շրջանի երևանի կուլտուր-կրթական կյանքի մասին, ցույց են տվել երկու դպրոց: Դրանցից մեկը հիմնվել է 1832 թվա-

* Ալագյազ-Արադած: Մանոթ. «Կովկաս»-ի խմբագրության:

¹ «Կովկաս», 1847, № 46; Այս ժամանակ տես նաև «Դիվան և Արովյանի», Երևան, 1940, էջ 182—184.

կանի Հունվարի 14-ին և եղել է Երևանի հրկասյա պետական դավառական դպրոցը¹ և Երկրորդը բաց է արել եղմիածինը 1837 թվականին։ Այդ էլ եղել է Հայերի Հոգեոր դպրոցը, որը հետագայում, 1857 թվականին վերածվել է թեմական դպրոցի։²

Խնչակես Հայտնի է՝ Արովյանը 1843 թվականի Հուլիսի 11-ին՝ աղատվելով Թիֆլիսի գավառական դպրոցի տեսչի պաշտոնից, փոխադրվել է Երևան և ստանձնել գավառական դպրոցի տեսչի պաշտոնը։ Հայտնի է, որ նա ունեցել է Երևանում նաև մասնավոր դպրոց։ Մրանք են մինչև այժմ հայտնի փաստերը Արովյանի շըրջանի Երևանի դպրոցական կյանքի մասին։

Հայկական ՍՍՌ Գրական Թանգարանի կողմից վերջերս ձեռք բերված՝ Խաչատուր Արովյանի դասընկեր Առաքել Արարատյանի տեսրականներից մեկում Արովյանի հրշատակին նվիրված ոտանավորը ցույց է տալիս, որ իր կյանքի վերջին օրերին Արովյանը, փոխարքա Վարանցովի կողմէ կողմից հրավեր է ստացել պաշտոնավարելու Թիֆլիսի Նույնաց իգական դպրոցում։ Այդ ոտանավորում (որ դրեւ է Առ. Արարատյանը) ասված է.

«Բայս հաճութեան տիկնոց մեծի
Փոխարքային վորոնցովի
Ի դպրոցին նունեաց կուսի
Նշանակեալ պետ մեկուսի։
Մինչ պատրաստեալ ի չու յայս կոյս
Առեալ զտոն, զամենայն կոյս,
Ի գիշերի ընդ արշալոյս
Երրորդ աւոր ապրիլ ամսոյս
Յանկարծ կորավ իմ Ապովեան,
Թափուր թողուլ զիւր ննջարան»³

Թիֆլիսի Նույնաց իգական դպրոցը բացվել է 1846 թվին⁴ և այնտեղ գերազանցապես սովորել են Հարուստ դասի աղջիկները։ Արդյոք արդարիսի մի իգական դպրոց էլ Երևանում եղել է թի ոչ, և եթե եղել է, Արովյանը որևէ մասնակցություն ունեցել է այդ

¹ Ե. Շահաղիզ, «Հին Երևանը», Երևան, 1931 թ., էջ 250։

² Նույն տեղում։

³ Հայկական ՍՍՌ Գրական Թանգարան, Առաքել Արարատյանի արխիվ Արդասիք Ներսիսյան դպրոցի» էջ 141։

⁴ «Կավազական Կալենդար»։ 1853, стр. 562,

կրթական հիմնարեկի բացման նախապատրաստման գործին, կամ ինչու գավառական դպրոցից ազատվելու օրերին Արովյանը հրավիրվել է Թիֆլիսի իգական դպրոցը և ոչ երեանի Դժբախտաբարայու հարցերի մասին ոչ մի տող չի գրվել մինչև այժմ՝ Բայց դարձյալ նզմիրի Արշալույս Արարատյանը՝ օգնությամբ կարելի է լուսաբանել այդ հարցերը:

«Արշալույս Արարատյանին էջերում տպագրվել է մի ուշագրավ ոտանավոր, որից պարզվում է, որ 1850-ական թվականներին Երևանում եղել է Հոփիսիմյանց իգական վարժարան:

Ըստ էության այս առաջին իգական դպրոցն է Հայաստանում, և հենց դրանով էլ անպայման ուշադրության արժանութիւն:

Մեր եշած ոտանավորը ստորագրված է Իզմիրի Հոփիսիմյանց վարժարանի աշակերտունենքրից մեկի՝ Տիգրանունի Շահինյանի կողմից և գրված է տարեկերչին քննությունների և հանդեսների առթիվ Ռւշագրավ է, որ Իզմիրի Հոփիսիմյանց դպրոցի այդ աշակերտունին ողջունում է Երևանի Հոփիսիմյանց դպրոցի աշակերտուներին:

Տիգրանունի Շահինյանը, որը հանդես է գալիս որպես առաջ բանաստեղծունենքրից մեկը, մեծ դրվատանքով է խոսում ոչ միայն Երևանարևակ հայունների մասին, այլև շոշափում է Հասարակական-բազարական հարցեր, ողջունում Ներսիս Աշտարակեցուն, արտահայտելով անշուշտ ժամանակի հայ բորժուազիականությունը:

Ամենուրդ չենք համարում մեջ բերել այդ ոտանավորը ամբողջությամբ, որպես հայ ժողովրդի արևելահայ և արևմտահայ հատվածների, բայց որում մասնավորապես Երևանի ու Իզմիրի մտավոր-կուլտուրական կապի առաջին արտահայտություններից մեկը:

ԴՐՈՒՅՏ

Առ աշակերտունիս սրբոց Հոփիսիմյանց դպրատան, որ յերեան, ի դիմաց աշակետունեաց Հոփիսիմյանց դպրոցի Զմիւնին:

Այն ինչ ոգին զմիւս խրախուսէր նորրնտել,
Թուշիլ, յածիլ դհայրենեօր բան երգել,
Զայն աւետեաց ի հայրենիաց անտի բարձր,
Ի Հայկականց տանէ հնշեաց, բանի՝ բաղցր:

Զի երևանի հան յերևան զնոր դարաստ,
 Հովի տուն, յոր գումարը փայլին ի հաւատ,
 Զի զի՞նչ լուր քաղցր, ո՞ օրիորդը համազգիք,
 Քան զձեր ի մէջ ուշմանց ժաղկին միասիրութ
 Ոչ շատացաւ ուստիրը պարծիլ երևան,
 Այլի գոտերցդ երաց լուսոյ ճեմարան:
 Զեր օրիորդը, որք նորա ծոցն դարձանիք,
 Ենորհաց կաթամբ, սուրբ գիտոթեամբ սնանիք,
 Զեր քաջ համբամ, որպէս գեփիւռ զուարթագին
 Ծնչեաց իի մեր սուրբ Հոփիսիմեանց նոր ալդին,
 Փառազգեցի՝ թո՛ղ Այրարատն ձեր վարուք,
 Հարսն լուսոյ ձեր լուսաւոր իմաստիք
 Այցելուն մեր պատկառելին սրբազան,
 Կեցցե՛ ներսես կաթողիկոսն աղդախնամ
 Մեկինսան ձեր, կեցցե՛ ալո՛ վեճ իշխանն,
 Որ ոչ խնայեաց առ ձեր ուսմանն զպատկան:
 Միա մեզ ուրեմն կրթիլ յերկիրդն առ աստուած
 Լապտեր ունիլ ըստ իմաստուն կուսանաց:

Տիգրանուի Հովհաննու Շահնիմյան Վ. Մ.
 Առակերտուեի սրբոց Հոփիսիմեանց դպրատան Զմբւռնիու:

Ակնհայտնի փաստ է, որ Երևանում և Իզմիրում նույն թվականներում եղել է Հոփիսիմյանց իգական դպրոց և որ Երևանի Հոփիսիմյանց դպրոցը իր ուսումնական ծրագրով ու առաջադրած նպատակներով նման է եղել Թիֆլիսի նույնյանց իգական դպրոցին:

Մեր այս ենթադրությունը հաստատում են այն ժշատ տեղեկությունները, որ դանոօմ ենք Կավказսկի կալենդար¹-ի այդ թվականների համարներում: Նախ այդ տվյալներից պարզվում է, որ Երևանի Հոփիսիմյանց դպրոցը բացվել է նույնյանց դպրոցից 4 տարի հետո՝ 1850 թվականի հունվարի 1-ին, որ այդ դպրոցում սովորել են Երևանաբնակ բազմազգի աղջիկներ՝ հայ, ուու և աղբաբեջանցի աշակերտունիներ: Տիգրանունի Շահնիմյանի ուղերձը դրվելու թվին Երևանի Հոփիսիմյանց իգական դպրոցում սովորում էին 28 աշակերտունիներ, որոնցից 11-ը հայեր, 10-ը՝ ուուներ և 7-ը աղբաբեջանունիներ: Եվ որ Հոփիսիմյանց իգական վարժարա-

¹ «Արշալույս Արարատյան», 1853 թիվ 42:

Նի հայոց կրոնի ու լեզվի ուսուցիչն է հղել ոմն Առաքել Տեր-Համբարձումյանը¹

Ո՞վ է այս Տեր-Համբարձումյանը, արդյոք Արովյանի աշակերտներից կամ ընկերներից մեկը, գժրախտաբար հայտնի չէ. Մի բան պարզ է, որ դպրոցը 1850 թվականին բացված լինելով, այսինքն Արովյանի անհայտանալուց երկու տարի հետո, Արովյանը չեր կարող հրավիրվել այստեղ պաշտոնի:

Անհավանական չէ անշուշտ, որ եթե ոչ Հոփիսիմյանց դպրոցի բացման, գոնե նրա նախապատրաստման աշխատանքներին մասնակցել է Արովյանը և գուցե դիմել փոխարքային՝ նույնաց դպրոցի ծրագրով մի դպրոց էլ Երևանում բաց անելու համար, մասնավանդ որ այդպիսի դպրոցներ բացվել էին արդեն Քութայիսում, Շամախիում և ուրիշ տեղերում:

Մեր բերած փաստերը վկայում էն, թե ինչպիսի սերտ օրգանական կապ է եղել 100 տարի առաջ արևմտահայ և արևելահայ հատվածների և մասնավորապես Երևանի ու Իզմիրի միջև Հավանական ենք համարում Խաչատուր Արովյանի մասնակցությունն այդպիսի սերտ կապի մեջ: Իսկ այդ՝ լավագույն ձևով կարող էր արտահայտվել գրավոր կերպով, թղթակցություններով:

Որ խաշատուր Արովյանի անունը ծանոթ է եղել «Արշալույս Արարատյանի» խմբագրությանը, դա նույնպես հավանական է: Այդ ցույց է տալիս, գուցե նաև «Արշալույս Արարատյանի» այն բացատրությունը, որ կա «Աշխարհիկ բարբառ Երևանցի հայոց» պատմվածքի վերնագրի տակ՝ «Գրեալ ի պատուելի Խաչատուր վարժապետէ Ապոլենանու: Պարզ է, որ եթե սպատվելիս բառը, որպես հարգանքի արտահայտություն՝ կարող էր գրվել նրա անվան մոտ, ապա վարժապետ բառը խմբագրությունը կարող էր գրել միայն յավ խմանալով, որ Արովյանը Երևանում մանկավարժական աշխատանք է կատարում և հայտնի է իրքն մանկավարժ-ուսուցիչ: Իսկ թե Երևանի գավառական դպրոցը ծանոթ էր «Արշալույս Արարատյանի» խմբագրությանը, այդ արգեն տեսանք նախորդ է չհրում:

Որ գրվածքը ինքը Արովյանն է ուղարկել «Արշալույս Արարատյանի» խմբագրությանը և ոչ արտատպություն է մի որևէ հրատապակությունից, կամ՝ ավելի ճիշտ, Արովյանի ձեռագիրն է եղել Իզմիրում, և ոչ որևէ տպադրում օրինակ, այդ էլ երեսում է այն մասնակի խմբագրական աշխատանքից, որին ենթարկվել է գր-

¹ „Кавказский Календарь“, 1853 стр. 563.

վածքը։ Աբովյանի երկերի ակադեմիական հրատարակության ծանոթագրությունների մեջ առված է, թե գրվածքը արևմտահայ ընթերցողներին առավել մատչելի դարձնելու դիմավորությամբ, խմբագիրը սմի քանի տեղ հեղինակի լեզվի մեջ մտցրել է արևմտահայ ձևերը, ինչպես «Հոռանցություն», «Կորսոնցունի», «Քորսոնցունի», «Բացի քեն», ամի խավարեցները, ոչի արերը և ալլուն¹

Մեզ թվում է, որ Դ. Պալտագարյանը Արովյանի լնդիք մեջ ոչ
մի փոփոխություն չի մտցրել. միայն մի երկու տեղ, որտեղ առա-
վել անհասկանակի բարբառային արտահայտություններ են եղեւ,
փակազգերի մեջ դրվել են դրանց արևմտահայ նշանակությունը,
օրինակ, շարշարեց բառի մոտ փակազգերի մոտ գրված է բարկա-
ցուցյալ, նշանած բառի մոտ՝ հարս և այլն: Մնացած «շտկումները»
մեր կարծիքով արդյունք են դրաշաբական սխալի, ձեռագրի վատ
ընթերցման: Օրինակ Արովյանը դրել է «Մեր օրը մի խավարեց-
նի՞ր, դեղա ջան, մեր կյանքը մի ոչնչացնի՞ր»: Այստեղ մի խա-
վարեցնիքը բառը դրաշաբը շարել է «մի խավարեցներ», նախ շփա-
թելով արևմտահայ ոճի հետ, և հետո Արովյանի են ի տառերի
շատ նմանության պատճառով: Այլապես մի՞թե ամի խավարեցնիքը
ձեզ ամելի անհասկանալի էր, բան, ասենք օմին, վարափուրդ, Էն-
դուր ձեմբը, որոնցից և ոչ մեկը ոչ ուղղված է և ոչ էլ բացատըր-
ված: Ամենայն հավանականությամբ դրաշաբը գործ է ունեցել ձե-
ռագրի, այն էլ հենց Արովյանի ձեռագրի հետ: Հնարավոր էր ան-
շուշտ ենթադրել, որ որիշի կողմից արտադրված մի օրինակ է ըն-
կել Իզմիր, եթե համոզիլ վիճեր մեր այն պնդումը, թե Արովյանը
կարող էր կապ ունենալ «Արշալույս Արարատյան»-ի խմբագրու-
թյան հետ:

Անշուշտ, Արովլյանը շահագրդոված էր, որ իր երկերը լույս
տեսնեին «Արշալույս Արարատյան»-ում։ Նախ՝ այն պատճառով, որ
թիֆլուսում և երևանում Արովլյանը ուներ հակառակողներ զեկա-
վար շրջաններում, ուստի հնարավոր է, որ նա զգուշանար գրգռե-
լու իր հակառակորդներին աշխարհիկ բովանդակությամբ ու լեզվով
մի գործի տպագրումով Կովկասի լրագրերում և երկրորդ, Արօվլյա-
նը՝ լինելով աշխարհարարի ջերմ ջատագով ու պաշտպան, հաւ-
կանալի է, որ պետք է ցանկանար տպագրի մի աշխարհարար
պարբերականում, որը լայնորեն տարածված էր գրեթե բոլոր հայ-
քաղություններում։

Ինչու Աբովյանի այդ հատվածը լուս է տեսել 1850 թվակա-

¹ Ա. Աբովյան, «Երկերի լիակատար ժողովածու», համոր 4,էջ 320—321:

նին, նրա անհայտացումից ուղիղ երկու տարի հետո «Արշալույս» Արարատյանի և «Առվելասի» փոխադարձարար օգտագործած նյութերի համեմատությունը ցույց է տալիս, որ երթեմն մոտ մեկ տարի տարբերություն կա դրանց գրության և տպագրման ժամանակի միջև։ Կնշանակի Արովյանի ուղարկելուց մոտ 8—10 ամիս հետո միայն կարող էր հասած լիներ նյութը «Արշալույս» Արարատյանի ձեռքը՝ երկի առևտրական ճանապարհով, իսկ թե ինչու մոտ մեկ տարի էլ մնացել է խմբագրատանը, արդ էլ գուցե պետք է բացարել նյութի ոչ ընթացիկ բնույթով։

II

Ակներեւ է Խ. Արովյանի և Մ. Նալբանդյանի գաղափարական աղդեցությունը 60—70-ական թվականների արևմտահայ դիմոկրատ գրողների և առաջավոր գաղափարներով տողորոված երիտասարդության վրա։ Սուեֆան Ռոկանի «Արևմուտք»-ի և Հ. Արվաճյանի «Մեղմի» դիրքը Մ. Նալբանդյանի ու Արովյանի նկատմամբ, Նալբանդյանի այցելությունը Փարփակ և Խ. Պոլիս, նրա շփումը արևմտահայ գրողների ու հրապարակախոսների հետ, մասնակցությունը Պոլսի պահպանողական և առաջադիմական հոսանքների պայքարին, մերձեցումը Պոլսի երիտասարդության հետ, Բարեկործական ընկերության ժողովներին նրա մասնակցությունն ուժեղ ազդեցություն են թողել այդ շրջանների վրա։¹

¹ Թե ինչպիսի մեծ հեղինակություն է ունեցել Նալբանդյանը Արևմտահայ երիտասարդության մեջ, երեսում է այն բանից, որ մինչև սուլթանական խոսազույն ցենզուրայի հաստատումը և հալածանքները, Նալբանդյանի ստանավորները, մանավանդ՝ «Ազատ» Աստվածը՝² շարունակ արտասանվում էին Պոլսի բեմերից, երգվում, արտագրվում տեսրակից տեսրակ ու անգիր արվում Այսպես կոչված «ազգային սահմանադրությանը», հաջորդող քսանամ յակում Նալբանդյանը կ- Պոլսի առաջամբ շրջանակությունը, հաջորդող քսանամ հայ հեղինակն էր, Այդ հայերը քառապատկից հասկացիս սուս-թուրքական պատերազմի օրերին, երբ Նալբանդյանի բանաստեղծությունները արդեն պայքարի էին կոչում հայ երիտասարդությունը, ընդգիր սուլթանական ըռ-նապետության։

«Մշտի» թղթակիցը, Հայկակը 1878 թվին առանձնահատուկ հրճվանակը գրությունը և Այս գիշեր փառավոր հանգեստ պիտի լինի Օրթազյուղի հայց թատրոնին մեջ, «Աղքատաք Փարթեզու», Ներկայացվելի հետո պ. Աղօմյանց, առաջին կարգի դերասանը, շարժումներով պիտի կարգա Նալբանդյանցի երգը, ինչպես ուրիշ անգամ ալ կարդացած է Պատկանյանցի ՀՀմիի էլ լուսնքու Մեծ ողերություն կա այժմ այսեղ։ («Մշտի», 1878, № 43)։

Նույնպիսի հմայք ուներ և Կ. Աբովյանը կ. Պոլսում, որի «Աղասու երգը», «Վերթից հատվածներ» երգիւմ ու արտասանվում էին և. Պոլսի երիտասարդական հավաքույթներում, հափշտակությամբ ընթերցվում էր «Վերթ Հայաստանին»:

Եթե առաջին տասնամյակներում Աբովյանի անունը հիշատակվել է արևմտահայ մամուլում գերազանցապես մեր հիշատակած «Արշալույս Արարատյանի» տպած հոգվածի, կամ Պարոսի հետ նրա՝ Մասիս սարը բարձրանալու առնչությամբ, ապա 60—70-ական թվականներին արևմտահայ դեմոկրատական շերտերում նկատվում է «Վերթ Հայաստանի»-ի ուղղակի ազդեցությունը:

Ամենայն հավանականությամբ «Վերթ Հայաստանի» վեպը արտասահման է ընկել հենց Հայատարակված թվին: Հնարավոր է, որ նույն թվին նաև հասել է և Փարիզ, Ստեփան Ռսկանի ձեռքը, Պուլիս՝ և Սրբաճանի ձեռքը: Համենայն դեպք Սրբաճանի «Մեղմի» շուրջ համախմբված դեմոկրատական մտավորականությանը ծանոթ էր «Վերթից»: «Մեղմուն», «Աղասու խաղից» մի հատված տպադրին էր «Վերթից» բույս ընծայումից մի տարի առաջ՝ 1857 թվականի հուլիսի 15-ին, անշուշտ արտատպեկով Գամառ Քաթիարյի հայտնի «Ազգային երգարանից», որը լույս էր տեսել Պետերբուրգում՝ դրանից մեկ տարի առաջ, 1856 թվին:¹

Գամառ Քաթիարյի երգարանի վերնադրի «Հին և նոր գործա-

Առաջին թուրքական պատերազմին նախորդող տարիներին կ. Պալսում վարդան Մամիկոնյանի, Տիգրան մեծի նկարներից ավելի նալբանդյանի նկարներն էին մեծացվում ու հագարներով վաճառվում լրագրավաճառների մատ, կըսպակներում թերթերում հայտարարություններ էին լույս տեսնում Նալբանդյանի նկարների վաճառումն վերաբերյալ:

Նալբանդյանի ազդեցությանը այնքան խոշոր էր երիտասարդության վրա, որ երբ 1876 թվականին հիմնվում է «Արարատյան» ընկերությունը, որի նպատակն էր օգնել գավահին, գյուղերում դպրոցներ բաց անել, այդ ընկերության անդամներից Արփիարյանը առաջարկում էր ընկերությունը կռչել Մ. Նալբանդյանի անունով:

«Կափափաքերի ընկերության անունը՝ «Նալբանդյանց» դնել. — դրում է իր հուշերում Արփիարյանը՝ կովկասցի հեղափոխական բանաստեղծը գրաված էր մեր պատանեկության սրտերը: Սիրիս մեռած էր Նալբանդյանց իրը հեղափոխական ու «Աղասու ասուվածը»՝ իր խոհ սրտեն դուրս ժայթքած էր մեկ ցասումով ... «Աղասու ասուվածը» միշտ մեր ազգային երդն էր... անջնջելի հիշատակ մը թագած էր սրտերնուու վրա » («Նոր կյանք», 1890, № 14):

¹ Աղջային երգարան հայոց-Մաղկաքաղ հին և նոր գործածական ամեն պարունակության երգերու կամ տաղերու, այբբենի կարգով աշխատասիրեց Գամառ Քաթիարյի Ա. Պետերբուրգ, 1856:

ծական երգերը արտահայտությունը ցույց է տալիս, որ «Աղասու խալը» 19-րդ դարի կեսերին արդեն երգվում էր ժողովրդի մեջ և անհավանական չէ, որ անցած լիներ նաև արևմտահայերի ժողովում և ըՄեղունակ էլ «երգաբան»-ից արտառակեր այն երգերը, որոնք ծանոթ էին արևմտահայերին («Հայոց աղջիկներ», «Աղասու երգը» և այլն), մանավանդ որ այդ երգերը թի «Երգաբան»-ում և թի ըՄեղունակ տպագրված են անստորագիր:

Այդ նույն երգերից մի քանիսի, նաև իզմիրի «Մայիկ» ամսագրում տպագրվելը հնմաղընէլ է տալիս, որ դրանք ծանոթ էին արևմտահայերին:

* * *

Խաչատրուր Արովյանի մասին առաջին լուրջ հոդվածը գրել է Ստեփան Ռսկանն իր խմբագրած «Արևմուսքը» թերթում, որտեղ խոսում է Արովյանի կենսագրության մի քանի ուղենչային դեպքերի մասին ու վերլուծում «Վեհրը Հայաստանի» վեպը:

Ռսկանի հոդվածաշարքը լույս է տեսել «Արևմուսք» պարբերականի 1859 թ. երեք համարներում (թիվ 6, 7 և 10):¹

Առաջին հոդվածում խոսվում է Արովյանի կենսագրության մասին, ծանոթացվում նրա անձնավորությունը, հիշատակվում է անհայտացման վերաբերյալ տարածված կարծիքները:

Ռսկանի վկայությամբ Արովյանի անունը իրեն, հետեւաբար և ուրիշ արևմտահայ մտավորականների, հայտնի է եղել վաղուց՝ շշատ ատենէ ի վերը, իսկ ունի Հայաստանի վեպը նա ստացել է տերեանցի աղգասեր բարեկամներու շնորհիվ։ Ռսկանն ըստ երեւույթին ունիցել է մի մտերիմ գաղափարակից, որը եղել է գուցե Արովյանի աշակերտներից կամ՝ համենայնդեպս, նրան շատ մոտիկ մարդկանցից մեկը։ Այդ մասին նա ունի որոշակի հիշատակություն։ Մեջ բերելով Արովյանի անհայտացման դեպքը, գրում է. — «Այս տրտում դեպքը մեղի պատմողը դժբախտ հեղինակին աշակերտներն մեկն է և չի կրնար Արովյանին անունը հիշել առանց ափսոսալու անոր ճակատագրին և մեր աղգին վրա, որ հազվագյուտ տաղանդ մը կորում անմեկնելի կերպով»:²

Թե ով է եղել Ռսկանի տերեւանցի աղգասեր բարեկամը, Արով-

¹ Մտահնազրուկան ցուցակներում այս աղբյուրը զարմանալի կերպով պրեթե միշտ ցույց է արգել «Արևմուսք»-ի երկու համարները՝ 6 և 7-ը՝ անտեսելով 10-րդը, ուր տպագրվել է Ռսկանի հոդվածի վերջին մասը:

² «Արևմուսք», 1859 թիվ 6, էջ 41.

վլանի աշակերտներից ո՞րը, գժբախտաբար հայտնի չէ, բայց հողվածից երեսմ է, որ այդ անձնավորությունը եղել է Արովյանին շատ մոտիկից, իր անձնական կլանքում ու խոհերի մեջ ճանաշող մի մարդ Ռուկանը հաղորդում է այնպիսի ժանրամասնություններ՝ Արովյանի բնավորության, սովորությունների, հակումների վերաբերյալ, որոնք չեր կարող քաղած լինել «վերք Հայաստանի»-ից ևամ ռշուսիսափայլուում Ստ. Խաղարյանցի հաղորդած կենսագրական մի քանի տեղեկություններից,¹ որոնք լույս տեսած լինելով մեկ մարդ առաջ, 1858 թվին հնարավոր էր, որ ծանոթ լինեին Ռուկանին:

Անշուշտ Ռուկանը այդ թվին ծանոթ է եղել նաև օտարազգուների կարծիքներին, նա մեշքերումներ է կատարում ոչ միայն մեզ հայտնի եպրոպացիների գրաններից (Վագներ) այլև անծանոթ ֆրանսիացիներից, որոնք իր հետ ունեցած նամակագրությունների մեջ դրվածանքով են խոսել Արովյանի մասին։

Ռուկանը նույն ժերեսանցի բարեկամից» պետք է իմացած լիներ նաև Արովյանի անհայտացման վերաբերյալ այն կարծիքները, որոնք մինչեւ այսօր էլ դեռ հույսում են Արովյանով զբաղվողների մտքերը։ Ռուկանի կարծիքով անհավանական է Արովյանի Սիրիր աքսորվելու։ Նա գտնում է, որ ինչքան էլ որ Արովյանը ովապուն երևակայություն և մեծ հայրենասիրություն է ունեցել, այնուամենային նա կարող էր իրեն զսպել և օրենքի սահմանած գծից դուրս չգալ։ Ռուկանն ավելի հավանական է համարում Արովյանի ինքնասպանությունը։ Այս կարծիքը հիմնավորելու համար մեջ է բերում «վերքից» ընդարձակ ցիտատներ, որոնք վկայում են Արովյանի հոսանքատության նույնանելու, անձնասպանության որոշ հակումը։

Հետաքրքրականն այն է, որ Ռուկանը՝ հակվելով ինքնասպանության վերսիրայի կողմը, ինքնասպանությունը բացառապես կապում է հասարակական պատճառների հետ։ Նա Արովյանին ներկայացնում է իր միջազգայրում շգնահատված, շհասկացված ու ըրմբունված մի մեծություն, կղերտկանության կողմից արհամարհված ու հալածված մի մարդ։ Խաշիս հայտնի է, Ռուկանի այս համադրությունը ունի իր շատ որոշ հիմնավորումը։ Էջմիածինը նրան համարում էր լուսավորչական կրոնից հեռացած, օտարացած մի մարդ։ Նույնիսկ Արովյանին սիրող շատ մարդիկ զգուշանում էին

¹ «Հյուսիսափայլ», 1858 թ. էջ 144—148։

նրա հետ մտերմական կապեր ունենալուց, Մենք պատահական չենք համարում նաև Թիֆլիսի «Կովկաս» թերթում առնասարակ Աբովյանի անվան շուրջ պահպանված քար լուսվունը՝ նույնիսկ նրանից թարգմանական էջեր տպագրելիս, այնինչ նույն «Կովկասի» էջերում շատ ու շատ երկրորդական, երրորդական անձնափորությունների, գրողների, հասարակական գործիչների անունները լույս էին տեսնում հաճախ: Անգամ Աբովյանի գործունեության մասին խոսելիս, Աբովյանի գալառական դպրոցի կյանքը նկարագրելիս «Կովկասը» զգուշացել է Աբովյանի անունը տալուց:

Ստեփան Ռուկանը Աբովյանի կենսագրությանը նվիրված հոդվածը վերջացնում է հատկայալ ջերմ տողերով:

«Ելլ, հուսահատություն, թե դիմվածք անհնարին է, որ իր վրա շողբանք և գրագետներու համակրությունը շգրգռենք իր հիշատակին համար: Ոչ, չպիտի քավի, որ իրավունք ուներ, երբ կդրեր «Մեկ օր էլ դու վեր կընկնես, կմենանես, մեկ ողորմիս ասող էլ չես ունենար»: Իր աշակերտները և այս տողերը գրողը իր վրա պիտի դժան միշտ, երբեք չպիտի դասեն զինքը այն սուս ազգասերներու կարգը, որք անձնական փառքի համար ամեն իրավունք ունի տակ կառնեն և որք գրիշ ունենալով ձեռքերնին, երկու տող շուղեցին իր վրա գրելու¹:

Ռուկանի վերջին ակնարկը վերաբերում է անշուշտ արևելահայ ինտելիգենցիային, որը բացի Մ. Նալբանդյանցից ու Ատ. Նազարյանցից, քար լուսվուն էր պահպանել Աբովյանի շուրջը ու միայն «Արևմուտքի» հիշյալ Հոգվածի լույս ընծայումից մեկ տարի հետո՝ 1860 թվականին, Մ. Աղաբեկյանը «Կոռունկ Հայոց աշխարհի» հանդեսում խղում է լուսվունը և առաջին ընդարձակ կենսագրական տեղեկությունները տալիս Աբովյանի մասին:²

Ռուկանի երկրորդ և երրորդ հոդվածներում խոսվում է «Էկերը Հայաստանի» վեպի արժանիքների մասին, ընդարձակ մեջբերումներ կատարելով «Էկերը»-ից:

«Էկերը» խմբագրը Աբովյանի «Էկերը» ըննության է առնում երկու տեսակետից: Նախ՝ ծանոթացնում է այն, որպես բանասիրական, աղքագրական հարուստ նյութ պարունակող մի աշխատություն, որը մանրամասն տեղեկություններ է տալիս հայ ժողովրդի նիստ ու կացի, բարբերի, սովորությունների, կենցաղի մասին: Եվ երրորդ, «Էկերը» ըննության է առնում որպես վիպ,

¹ «Արեմուտք», 1859 6, էջ 42.

² «Կոռունկ Հայոց աշխարհ», 1860, էջ 866—875.

այդ բառի ժանրային առումով, կանդ առնելով նրա թե դադախացական բովանդակության և թե գեղարվեստական արժանիքների վրա:

Ասկանին ամենից շատ ուրախացնում է այն, որ Արովյանը առաջինը փորձել է գեղարվեստական զրականության նյութ դարձնել ոչ օտարների կյանքը, հերոսությունները և ոչ էլ հայ ժողովրդի խոր անցյալի դեպքերը, այլ ժամանակակից կյանքի հուզող հարցերը իրենց կոնկրետ հերոսներով, նա գովում է ուներքից հեղինակին, որը «օտար ժողովրդությունները ու զյուցազունները թողնելով կամք ըրեր է մեր քաջերեն մեկը ընտրել, անոր վարքը վիճական ձևով զարդարել և ազգին առջև դնել, որպեսզի տեսնե, կարդա և սիրովիլի»:¹

Ասկանը հրճվանքով է նշում, որ Արովյանը հրաժարվել է ճարտարանությունից, աստվածաշնչից և կյանքը քննել է «փիլիսոփայի աշքով», համոզվել է, որ «Ժողովուրդը թե ընտանի և թե Հրապարակի կյանքին մեջ այն գործերը կը սիրե, այն կիրքերով կյացալի», որք հեռուեն կամ մոտեն արձագանքն ին մարդկային զգացումներու և հայրենիքի փառքին կամ ազետքին»:² Հստ Ասկանի Արովյանի մեծագոյն արժանիքներց մեկն էլ այն է, որ նա առաջինը մտավելից շփելի է բուն աշխատավոր ժողովրդի հետ, յսի նրա անգիր ավանդությունները, դրի առել զրանք ու հրամցրել ընթերցողներին: «Արովյանը գեղջուկին վարքը կը նկարագրե, վարք, ուր եղբայրն ամելի քաջություն և վսկեմություն կա, քան թե թագավորի մը գործերուն մեջ»:³

Հոգմածի շարունակության մեջ Ասկանը փորձում է հիմնայուրել այն կարծիքը, որ հայ ժողովրդի թշվառության պատճառներից մեկն էլ եղել է այն, որ ունենալով հանդերձ արիության, քաջության, համարձակության ու խիզախության սփանչելի օրինակներ, բարձամթիվ անձնագործություններ, կարող լինելով հանդերձ ներքին և արտաքին թշնամու դեմ հերոսական կոփի մղելու, մարդիկ միշտ խուսափել են այդ բոլորը նկարագրելուց, դրանցով երիտասարդներին ոգևորելուց և հայ ժողովրդին նկարագրել են հըստ հնագահնդ մի մասսա: «Արոնամոլ եռանոր մը միշտ խավարեր է իրենց միտքը»:

¹ «Արեմուշը», 1859, 6, էջ 54:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

⁴ Նույն տեղում:

Աս. Ուկանի հոգվածաշարքում լայն տեղ է տրված Արովյանի լեզվին ու ոճին:

Հայոնի է, որ Ստեփան Ուկանը արևմտահայ աշխարհաբարձրի ամենամեծ ջառագովներից էր նա հետեւղական և համառ պարքար է մղել Միսիթաբրանների ոչ միայն պահպանողական գաղափարախոսության, այլև նրանց կեղծ ու շինծու, մասսաներին անհասկանալի գրաբարի դիմ:

Ուկանից առաջ ամբողջ մնկ տասնամյակ ուժեղ կերպով քորոքվել էր գրապարքարը և աշխարհաբարձր հրմականում իր տեղը նվաճել էր գրականության ու մամուկի մեջ: Արդեն հրապարակի վրա էին նիկողայոս Զորոյանի «Ընթերցասիրությունը», Գ. Օտյանի «Առաջարկություն աշխարհաբարձրի վրա» գրքունքը, Ն. Թումանյանի «Ռուղախոսության» առաջարանը, որոնք արևմտահայ աշխարհաբարձրի առաջին անկյունաբարերն են հանդիսանում: Աշխարհաբարով լույս էին տեսնում մի շարք թերթեր՝ ակրշալույն Արաբատյանն, «Մասիս» և այլն: Նույնիսկ պահպանողական բանակը իր հրատարակությունները կատարում էր նոր լեզվով: Աշխարհաբարով էին լույս տեսնում Միսիթաբրյանների «Թագմավիճակ» ու «Եվրոպաց» պարբերականները, հայ լուսավորչական եկեղեցու դադափարախոսությունն արտահայտող պահպանողական «Երևակը», որովհետև գրաբարը որպես լայն հաղորդակցության միջոց դադարել էր գոյություն ունենալուց:

Ուկանը Փարիզում շարունակում էր աշխարհաբարյանների սկսած գործը և իր «Արևմուտք» պարբերականում կոկում, հղում էր արևմտահայ աշխարհաբարձր, այն հարատացնում նոր տերմիններով, երբեմն ընկնելով ծայրահեղության մեջ ու փորձելով գրել նաև Ռուսինյանի առաջարկած արհեստական «ուղղախոսությամբ»: Պայքարը գրաբարի գեմ ոչ միայն չէր դադարել, այլ շարունակվում էր ավելի մեծ կատաղությամբ և հասկանալի է, որ Արովյանի ոչերքը՝ աշխարհաբարյանների ձեռքին կարող էր դառնալ մի լավագույն գենք՝ գրաբարամոլների դեմ պայքարելու համար: Առա թե ինչու Ուկանն իր հոգվածաշարքում լայն տեղ է տվել Արովյանի լեզվին:

«Խշաբա կերպի, — գրում է նա, — պարոն Արովյանը շատ հեռատես աղքասիրություն ուներ և գդալով ի վերջի, որ գրաբար լեզում, մանավանդ այն, որ Վենետիկի վանքին հետեւելով կը գրի, արգելը է, քանի թե գործի մեր առաջ երթալում, իր գրագետի փառքը կը գոհե և կալսի հին գրությունների հրաժարիլ: Այսօր քիչ ուսում-

հական կա, որ իր կարծիքն ըբլա, և իր ըրածը շփովես։ Ապա շա-
ցունակում է «... Կի հասկնա ժողովուրդը, կ'ըմբռնե անոր միտում-
ները, կը շոշափե անոր վերքը, բայց կը տրտմի, հայու սիրու
հայու թերան շոմի... Կը տրտմի, որ օտար լեզով և օտարին հի-
շատակովը հայ սիրու կղբռնու և միտքը կը դնե այս ազգավեր
սովորությունին դեմ զինիլ Եղնատրե ռամիկ լնուն, և կաշխատի
գրել ինչպես ռամիկը կը խոսի, այն աստիճան կը հաջողի, որ
դրամիկը կարդարու սեր մը կղգա»:¹

Արևմտահայ պահպանողական բանեակը միշտ էլ չկարողացավ
հանդուրժել հաշատուր Արովյանի աշխարհաբարը, այն համարեց
«զոհեհիմ» բառերով լի մի լեզու Այդ կարծիքն էին մանավանդ
Միմիթարյանները, որոնք այս կամ այն առիթով չեին թաքցնում
իրենց վերաբերմունքը։

Միմիթարյանները Արովյանի նկատմամբ ունեցած իրենց ատե-
յության մեջ այնքան առաջ էին դնում, որ նույնիսկ խուսափում
էին նրա անունը հոլովելուց, անդամ այն գեպքում, երբ այդ ան-
հրաժեշտ էր, Օրինակ, Վեննայի Միմիթարյանների օրգան տելքո-
պան», նկարագրելով Պարուտի Արարատ սարը բարձրանալը, խո-
ռուս է նրան ուղեկցող մարդկանց մասին, բայց Արովյանի անունը
լի հիշատակում, խոսում է այն մասին, թե իբր կասկածի տակ է
առնվել Պարուտի մինչև Մասիս սարի գագաթը բարձրանալու
փաստը, նրան ուղեկցող մարդկանցից երկուաը գրավոր վկայու-
թյուն են տվել, եկի խուսափում է այդ վկայությունը տվեղ Արո-
վյանի անունը հիշելուց:² Նույնիսկ այնպիսի խոշոր գիտնական,
ինչպիսին է Ա. Այտունյանը, իր ռժննական քերականություն արդի
հայերեն լիցվիր աշխատության մեջ սթանչելի կերպով հիմնավո-
րելով հանդերձ աշխարհաբարի վերջնական հաղթանակը և զար-
դացման օրինաշափությունը, որոշ վերաբարձրություն է անում «Էկերքի»
լիգի մասին և ասում թե այդ գործը «ըստ կարի ռամիկ լեզովի
դրված տաճկախառն, մի երկ էաւ»³

Անշուշտ Միմիթարյանների այս վերապահումը բոլորովին պա-
տահական բան չէր և չպետք է միայն լեզվի խնդրով բացատրել։
Արովյանի գաղափարական թշնամիները լինելով նրանք առհա-
սարակ թշնամական դիրք էին բռնել մեծ լուսավորչի նկատմամբ։

¹ «Արևմուտք», 1859, 7, էջ 34։

² «Ելրուսում» 1860 № 25։

³ Հ. Ա. Այտունյան. — Հիմնական քերականությունն արդի հայերեն լեզ-
ուշ, էջ 235։

Ոսկանը միանգաւմայն այլ կարծիքի էր: Ախիթարյանների թերություն համարածները նա նշում է հենց որպես Աբովյանի մեծագույն արժանիքները: Նա արդարացնում է Աբովյանի՝ վեպի նյութը ժողովրդի կտանքից վերցնելը, ժողովրդի սովորությունների նկարագրումը, բարբառով գրելը, նույնիսկ այդ բարբառի մեջ օտար բառերի առկայությունը և այդ բացատրում է լեզվի օրինաշահ զարգացումով, տնտեսական և հոգեոր պայմանների թերզումը և հետեւաբար այն համարում է ոչ թե թերություն, այլ առավելություն: Ոսկանը գրում է,

«Իր ոճը ուամկի բերանը ըլլալով, կատարելապես կը հայտնի այն ամեն փոփոխությունները, որ մեր լեզուն ընդունեց ժամանակի, կլիմայի, օտարի և առօրյա դեպքերու ազդումնեւ Այս փոփոխությունները միշտ խանգարում չեն կրնար սեպիլի և հետևաբար արհամարժվիլ: Ըստհակառակը շատ հեղ ընդունելի և գովելի են Անհնարին է, որ լեզու մը անփոփոխ մնա, վասնզի միտքը միշտ կը շարժի և լեզուն, որ թարգման է, պետք է որ հնազանդի իր շարժումներուն»:¹

Այսքան բարձր կարծիք ունենալով հանդերձ հաշատուր Աբովյանի լեզվի, թեմատիկայի, նրա արտահայտած դադարախոսության մասին, Ոսկանը կատարել է մի վերապահում, որով անշուշտ տուրք է տվել ժամանակի տիրապետող ըմբռնումներին: Նրա կարծիքով իր բոլոր արժանիքներով հանդերձ գժվար է «Վերը Հայաստանի» վեպը դատել ուկրոպական կանոններով, վասնզի, ինչպես ըսինք, ուամիկներու համար, և ումիկ ոճով գրված է այն և իբրև գրական շենք մի շընծայվիր մեր առջև»:²

Ոսկանի սխալն այստեղ այն է, որ նա՝ սուր կերպով ըննադատելով կլասիցիզմի ճոռում ու վերաբերած ոճը, առաջ բաշելով հանդերձ ժողովրդական գրականության անհրաժեշտությունը, չի կարողացել ամբողջովին ըմբռնել բուն ժողովրդական գրականության էությունը և շարունակել է այդ գրականությունը դիտել «եւկրոպական կանոնների» պահանջով: Ոսկանը Աբովյանի վեպի թերությունը վերաբերել է նրա գերմանական դաստիարակությանը:

«Գերմանական ճապաղություն մը, շատ կրկնություններ, և ասիական առավելություններ կտիրեն հոն», — գրում է նա:

Այդ սխալն անելով՝ Ոսկանն իսկույն կատարում է վերապա-

¹ «Աբեմուտք», 1859, 10, էջ 74:

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

Հովիզյուն և գրում է. «Բայց այս պակասություններու քով, հայրենական վառվուն սեր մը, Հայրավոր երևակայություն մը և նուրբ դիտումներ կգտնվի» գրեթե ամեն էշերու քրա... Կարդացողը կարծես թե Հայաստանի գյուղերու մեջ կը փոխադրվի և համարյում եղարայններու պարզության, գուշ շքավորության, երբեմն ալ սոսկալի աղեմոններու մասնակից կրլա, տեղ տեղ այնպիսի մանր և փափով նկարագրություններ կան, որ Բալզակի և Էոթեն Սուիի դրածներն վար չեն մնար և վիստասանի թանկագին տաղանդ մը կհայտնեն»:¹

Հայտնի է, որ Ոսկանի սիսալ մեկնաբանությունը շատ խիստ քննադատության ենթարկեց ուսուցիչուն դեմոկրատ Միքայել Նալբանդյանը: Նալբանդյանն իր «Մեռելահարցուկ»ի ծանօթազրություններից մեկում շերմ կերպով ողջանելով Ոսկանի հոգվածը, բարձր է գնահատում նրա մատուցած ծառայությունը Արովյանին ծանօթացներու գործում և դրամ է:

«Փարբեր «Արևմուտք» անշնով հայկական օրագիրը, որը հրատարակված է ներկա 1859 հունվարից, արդու Ստեփանոս Ոսկանյան գիտնական պարունի ձեռքով, յոր վեց համարի մեջ առիթ ստանալով այս գրքի հայտնութենից, խոսում է Արովյանի վարքի վերա, իսկ 7 համարի մեջ հայտնում է յուր կարծիքը ուկերը Հայաստանին» անումով գործի մասին: Առաջարարակ գիտունն հրատարակողը «Արևմուտք» գովությունը խոսում է Արովյանի մասին և հասկացել է բոլորովին թե գրքի խորհուրդը և թե հեղինակի արժանավորությունը, բայց այդ աշխատության մասնավոր կողմերին վերաբերված մի քանի կարծիքների մեջ չեմ կարող համաձայնիլ պրն. Ոսկանյանի հետ»:

Նալբանդյանը չի ընդունում Ոսկանի այն դիտողությունը, թե ովերը ոմամկի համար է և ռամկի ոճով դրված է:²

Ռամիկ բառը բառ երևութին Ոսկանի մոտ շատ ավելի նեղ իմաստ է ունեցել. նա միայն անգրագետ մասսա է հասկացել, իսկ Նալբանդյանը հասկանում է ամբողջ ժողովրդին, դուրս թողնելով նրանից միայն փոքրաթիվ վերնախավին: Նալբանդյանը գրում էր. «Համաձայն չեմ: Բոլոր ազգի համար է դրված. այնուղի կա ուսանելիք ոչ միայն շինականի համար, այլև քաղաքացու, այլև հայոց կիսատթերատ ուսումնականների համար ևս»:²

Ուշագրավ է, որ այն, ինչ որ Ստեփան Ոսկանը համարում է

¹ «Արևմուտք», 1859 թ. № 7, էջ 55:

²Մ. Նալբանդյան, «Երկերի լիակատար ժողովածու», համ. 1, էջ 280.

դերմանական դաստիարակության արդյունք, նաև բանգյանը բացատրում է բռն հայ ժողովրդի ազգեցությամբ:

«Եկամի և ոճի ճապաղությունը, — զրում է նաև բանդյանը, — հետեանք չէ բանաստեղծի գերմանական առաջանք, այլ բռն ազդեցություն տեղական ժողովրդի կյանքին և միտք հայունելու ձևերին: Նույնանշան բառերի անհամ կրկնությունը տեսանում ենք, այս, բայց չմոռանանք, որ Արովանցի խորհուրդը է գրել այսպես որ անկիրթ ժողովուրդը չկարծե թե զիրք է կարդում, այլ կարծե թե մի մարդ խօսում էր յուր հետո»¹

Իր հիշյալ փոքր վրիպումով Հանդերձ Ստեփան Ռոկանի հոգվածարքը մնում է Արովանի մասին զրամած առաջին լուրջ ուսումնասիրությունը: Կարևոր այն է, որ Ռոկանը սուկ հիացող լի եղել Արովանի ստեղծագործության նկատմամբ: Նա միաժամանակ կրել է Արովանի գաղափարական և զրական ուժեղ ազդեցությունը և այդ ազդեցությամբ գրել է մի վիպակ «Հայ գյուղազնունի մը» վերնագրով, որի սյուժեն բավականաշափ նման է «Վերքի» սյուժեին: Այստեղ էլ հիմնականը հայ ժողովրդի պայքարն է պարսիկ բռնապետության դեմ: Այստեղ էլ առկա է հայ գյուղազնունու արևեանդումը Հյուսեին խանի ֆառաշների կողմից, նրա շարշարումը, անձնատուր վիճելու անհողողությունը, նրա սիրած երիտասարդի պայքարը պարսիկների դեմ և այլն: Այստեղ էլ խօսվում է Երևանի հռչակավոր բերդի մասին, Զանգու գետի մասին:

Առհասարակ «Վերք Հայաստանի»-ի շունչը շատ որոշակիորեն իր վրա կրելով Հանդերձ, Ռոկանի գործը իր թե գաղափարական և թե գեղարվեստական արժանիքներով հեռու է «Վերքի» հետ համեմատվելուց:

* * *

Եթե 60-ական թվականներին Կ. Պոլսի առաջադիմական տարրերի կենտրոնն էր «Մեղուն», ապա հզմիրում այդպիսի կենտրոնն էր Գիլինդիրյանի «Մաղիկը», որի հիմնական ուժերը՝ Գ. Զիլինդիրյանը, Մ. Մամուրյանը, Արմենակ Հաքեռնին արտահայտում էին ժամանակի առաջավոր դադարաները և Հանդիսանում են արևմտահայ խոշոր լուսավորիչներ: Նրանք իմիգրան ու համարձակ սլայքար են մրել ռեալիզիոն տարրերի դեմ: «Մաղիկը» վայելում էր մեծ հեղինակություն առաջավոր երիտասարդության մեջ: «Մաղի-

¹ Մ. Նալբանդյան, «Երկիրի լիակատար ժողովածու», Համ. I, էջ 280,

լը չերմ էշեր է նվիրել Նալբանդյանին, միշտ հիշատակելով նաև Արովյանի անունը:

1861 թվականի նոյեմբերի 18-ին, երբ Մ. Նալբանդյանը Ալյաքանդրիայից հասնում է Եղմիք, «Սաղկի» շուրջ համախմբված երիտասարդներից մի քանիսը, որոնք նաև «Համապուրական» ընկերությունների անդամ էին, դիմավորում են մեծ ուսուցիչներին և հանդիպում ունենում նրա հետ:

«... Իր տեսությունը թեև կարճատես եղավ, — գրում է «Սաղիկը», — սակայն մեր հիշողությունը համակրության այնպիսի դրոշմով մը կնքեց, որ ժամանակին թեր անկարող պիտի ըլլա որբի և շնչելու¹:

Եվ իսկապես այդ տողերը գրողները շմոռացան Նալբանդյանին երբ 1866 թվին լսվեց Նալբանդյանցի մահը, առաջին զայրութիւ բողոքը բարձրացնողը եղավ Եղմիքի «Սաղիկը»:

Մամուլքյանը՝ խարազանելով «Հայկական աշխարհ» պարբերականի դավաճանական վերաբերմունքը դեպի Նալբանդյանը, գրում էր.

«Ակադեմի ինչպես Արովյանը, և իր մահը անվիրեժ կմնան, նույնպես կմնան և Նալբանդյանցը և իր մահը մութին մեջ»:²

Նույն հոգվածի շարունակության մեջ Մամուլքյանը գրում էր, որ հաճելի բան է սկզբունքի համար մեռնելը, թե այդպիսի նահատակություններն են, որ ապահովում են մարդկության առաջադիմությունը: Ուստի այժմյան դարում, երբ կա տպագրություն, մարդկանց սպանելով հնարավոր չեւ սպանել նրանց դադարիարները:

«... Անօգուտ է, այս, — գրում էր նա, — վասնպի եթե Նալբանդյանցը Արովյանի պես աներեւութ լիներ անդամ, ագատասեր դրիչները շպիտի դանդաղին անոր նահատակության պարագաները փնտռել, երևան հանել և հոշակել, ինչպես որ այսուհետեւ եթեր բորբեն ևս պիտի հոշակվին անշուշտ, եթե ոչ ի Ռուսաստան, դիթ այլուր, վասնզի Նալբանդյանցը, ինչպես կենդանության ատեն, նույնպես մահվանեն ետեն, պիտի դրծե ազգին մեջ, քանի, որ շղթան և սուրբ շեն կրնար կաշկանդել և սպանել այն լուսառու դադարիարները, որոնց հոետոր կանգնեցավ նա և որոնք իբրև ամպրոպացին մոռթորիկներ կորոտան թագադիր բռնավորներու դրսիներուն վրա, մինչև որ փայլակն ու կայծակը պայմին և թաք

1 «Սաղիկ», 1861, էջ 120:

2 «Սաղիկ», 1866, էջ 496:

ու գլուխ աշբին տոշորին... Նալբանդյանցի աղատագրական հայրենասիրությունը անդադար հրավեր մ'ունի կարդալու մեջ և ազգի նվիրական պարտք մը կատարելու։¹

* * *

60—70-ական թվականներին իշխող կղերա-պահպանողական և լիբերալ գաղափարախոսության դեմ համարձակ ու որոշակի դիրքավորումով հրապարակ է իշխում Սեղրակ Տեր Սարգսնացը, իր տէառարանի մը կայծերը բանաստեղծությունների ժողովածուում և «Շահնանի ի Սիամիր» շեշտված քաղաքական վեպով,² որը արժանանում է նալբանդյանի «Երկրագործության բախտին, արգելվում է, բռնագրավլում ոչ միայն Թյուրքիայում, այլև Ռուսաստանում»:

Ահա այս բացառիկ աշխատությունն էլ իր վրա կրում է և Արովյանի և Մ. Նալբանդյանի շատ որոշակի գաղափարական, նույնիսկ գրական ազգեցությունը։ Մեր նյութից դուքս համարելով Նալբանդյանի ազգեցության քննարկումը, կանգ առնենք այն մի քանի բնորոշ կետերի վրա, որոնցով Տեր Սարգսնացը մոտենում է եաշատուր Արովյանին։

Այդ վեպի մեջ Տեր Սարգսնաց՝ հավասարապես սուր, ոչընշացնող քննադատության է ենթարկում ինչպես ցարական բյուրոկրատիան, ցարիզմի ազգային քաղաքականությունը, որի պատճառով Ռուսաստանը դարձել էր «աղատամիտ մարդոց բանո», նույնպիս և տնտեսական քաղաքական ավելի ունակցիոն պարմաններում գտնվող սուվամական Թյուրքիան։ Տեր Սարգսնացը առաջինն էր արևմտահայ իրիկանության մեջ, որ սոցիալական անհավասարությունը դարձրեց վեպի նյութ, ցույց տվեց, որ մինչդեռ Կ.Պոլսում հայ բուրժուազիան ելքուական երկրների մարդասիրության վրա հույս դրած խաղում է հայ ժողովով բախտի հետ, գավառում հայ գյուղացիությունը ապրում է ամենադաժան պարմաններում, ևնթարկվում կրկնակի, եռակի շահագործման ու ճնշման։ Մի կողմից պարտքատերն է գյուղացու մեջքին նստել, մյուս կողմից՝ «թրուլ թվանրով մարդիկը, այսինքն պետական պաշտոնյանե-

¹ «Շաղիկ» 1868, էջ 490,

² «Շահնանի ի Սիամիր» վեպը գրված է 1871 թվին, բայց լույս է տեսել 1877 թվին։

րը, և վերքապես շնորհվոր մարդիկը՝ ալսինքն Հոգևորականությունը։ Այս այս երրորդությունն է, որ քամուան է հայ գյուղացու արյունը, խոռոչ սրբագրական բրտինքով ձեռք բերած հացի կտրու։

Ո՞րև է Տեր Սարգսենցի բաղաքական համոզմումքը, պայքարի նրա առաջարկած ուղին։ Այն որ հայ ժողովրդի փրկությունը չի կարող սպասվել ոչ աստծոց, իր խոսքով ասած՝ «Շոգմար տիրոջմեն», ոչ «ստամբուլ» պատրիարքեն», ոչ ոչ էջմիածնա կաթողիկոսին։ ոչ «Բագավորուն», այլ հայ ժողովրդի պատագությունը կարող է ձեռք բերվել միայն բուն այդ ժողովրդի շանքերով։

«Եահենն ի Սիսիլի» վիճի սյուժեն նույնպես շատ է հիշեցնում «Եկերքօ-ի սյուժեն Աղասուղ էլ, տիրող բննապետական կարգերի դեմ ըմբռատացող Ծահենը հարկադրված է թողնել իր սիրելի հայրենիքը ու թափառել այս ու այն կողմ. փրկել թշվառների կյանքը՝ աղատել կանաց բննադատիչների ճիրաններից։

Որ Տեր Սարգսենցը Ծահենի կերպարը գծելիս նկատի է ունեցել Աղասուն, այդ ամեն կասկածանքից վեր է։ Ծահենն էլ նույն հոգևորական կաշկանդումների, աղոթքների, հեղծուցիլ մինուորտից փափչելով այդ բոլորը սուր բննադատելով սկսում է իր գործունեությունը։ Ծահենը Աղասու նման որոշ սանտիմենտալ դեեր ունի, ազգասիրությունը նրա մոտ արտահայտվում է, մի տեսակ բուռն կարուտով և ինքն էլ շատ հաճախ, ինչպես Աղասին, սիրում է հայրենասիրական զեղումներ կատարել, խոսել, երգել հայրենիքի մասին։

Ինչպես Աղասին, այնպես էլ Ծահենը իր գործունեության մասնավանդ Տաճկահայաստանյան շրջանում, մտահոգված է հայ ժողովրդի փրկության գործով, հենց նույն Հայաստանի վերքը բուժելու դուրս եկած մի հերոս է նա։

Քաղաքաբարական տեսակետից Աղասու կերպարը անշուշտ ամելի խոսցած է, ամրողացած, տիպականացված։ «Ծահենն էլ ունի այլ կարգի առավելություններ Եթե Հայաբակական պայմանաների բննադատությունը Աղասու մոտ հանդիս է գալիս հիմնականում օտար տիրապետողների դեմ ծառանալով, եկեղեցական որոշ դոգմաների բննադատությամբ, ապա Ծահենը ամենից առաջ տեսնում է եկեղեցու ու կալվածատերերի շահագործող բնույթը, ցուց է տալիս, որ հայ ժողովրդի արյունը քամողները, նրա ձեռքի վերջին պատառ հացը խորդները ամենից առաջ ներքին ցեղին են։

Ահա հասարակական այս պայմաններից է, որ փախչում է Շահնը, ծառանում է այդ պայմանների դեմ, ընդզում է, ձերբակաշվում, բանտարկվում, աղատվում ու կազմակերպում հայ պաղթականության անցումը դեպի Ռուսահայաստան, որտեղ իշխողն է քրիստոնյա մի պետություն:

Այստեղից էլ երկրորդ տարրերությունը «Վերքի» ու Շահնի միջև Ավելի քան մի քառորդ դար էր անցել «Վերք»-ի հղացումից հետո, փոխվել էին հասարակական-քաղաքական պայմանները. եթե Արովյանի շրջանում նոր էր սկսվել Անդրկովկասի ռուսական գրավումը ու այն հակադրվելով պարսկական ժանր լժին, Արովյանը տեսնում էր քաղաքական ու տնտեսական նոր պայմանների անուրանալի առավելությունը, գովքն էր անում ռուսական տիրապետության, ապա Տեր Սարգսեանցը, որ տեսել էր փոքր ժողովուրդների հանդեպ ցարական կառավարության ցուցարերած գաժան քաղաքակրթությունը, մանավանդ աշխատավոր ժողովրդի կեղեգումը շինովնիկների ձեռքին, չէր կարող նույն ձևով գնահատել ռուսական տիրապետությունը, չէր կարող չնկատել ցարական պաշտոնյանների կամայականությունները, ցարիզմի զաղութային քաղաքականության ծանրությունը Կովկասի ժողովուրդների համար և այդ քաղաքականության պայմաններում ստեղծված հասարակական-քաղաքական այն ծանր միջնորդությունը, որ արևելահայերի մոտ այնքան ցայտուն կերպով գծել են Պառշյանը, Աղայանը, Արովյանից քառորդ դար հետո:

Դրա համար էլ Շահնի երկրորդ շրջանի՝ Թիֆլիսյան դրծունեությամբ Տեր Սարգսեանցը բացահայտում է ցարական ինքնակալության էությունը, ցույց է տալիս, որ այդ կարգերը ծառայում են միայն տիրապետող դասակարգերին, Տեր Սարգսեանցի մոտ կառուշակի քաղաքական գիծ, նրա համար Շահնի դժբախտության պատճառը նույնքան հայ շինովնիկները, դավաճան իշխան Միլիքովներն են, որքան ուսա նահանգապետները:

Տեր Սարգսեանցը կատարում է վերապահում: Շահնը միամտարար հայտնելով իր գաղտնիքը լրտես Մելիքովին, ասում է.

«Եյո, վշտացել եմ ուսւներից, ու թե ամենազոր թարգավոր կայտրից, որու համար եթե հաղար անդամ մեռնիմ ոչինչ չեմ դդար, ու փառք եմ համարում ինձ, ոչ էլ ոսւս պարզ ժողովրդից դժոնի եմ (ընդգծումը մերն է — Գ. Ստ.), այլ նրանց պաշտոնյաներից, որ վատ վատ օրենքներով այս աշխարհի ամեն քնական

իրավումքներն ու ազատությունը չնշել են, գորս տրաքում, պատում են, ախր էլ չեմ կարողանում համբերել:

Եատ պերճախոս է Տեր Սարգսենցի այս բացատրությունը: Նրա ակնարդեած «Յագավոր-կայսրը» հենց ոռւսական տիրապետությունն է, նա դրան կողմանակից է, գդգո՞ւ չէ ոռուս պարզ ժողովրդից, բայց նրա ամբողջ ցասումը տիրապետող կարգերն են, կաշառակեր մինումիկները:

Նա ու միայն անհատ շինովիկներին, այլ առհասարակ ցարական կարգերն է քննադատելի Այդ երևում է վեպի երկրորդ մասի յուրաքանչյուր տողից, մանավանդ Սիրիոս նկարագրությունից, որը ներկայացված է որպես «ազատամիտ մարդոց բանու»: Որտեղ ներկայացուցիչներ ունեն բոլոր ժողովորդները՝ ոռուսները, ուկրաինացիները, լեհերը, հայերը, վրացիները: Տեր Սարգսենցը՝ նկարագրելով իր հերոսի գործունեությունը թիֆլիսում, մի վանեցի ժամկետի միջոցով պատմում է թե այդ օրերին մի աննշան խոսքի համար ձերբակալվել ու սև կառքով Սիրիօ է աքսորվել մի դարպացած, եվրոպայում ուսում ստացած հայ երիտասարդ, որը հոր ու մոր մի հատիկն է եղիլ, սիրել է իր ժողովրդին:

Արդյոք Շահենի խոսակցի՝ ժամկոչի ակնարկած այս երիտասարդը Արովյանը չէ: Դժբախտաբար հեղինակը շի կարողացել ամբողջացնել այդ կերպարը, հարեանցի նկատողություններով է միայն ներկայացրել, բայց մի փոքր փաստ վկայում է, որ Տեր Սարգսենցը նկատի է ունեցել Արովյանին: Այս դեպքերը նկարագրելուց հետո Տեր Սարգսենցի վեպի չորրորդ մասն է սկսում, որի առաջին վերնագիրն է «Տասնեւմբեկ տարի վերջը»: Շահենի թիֆլիսում գտնվելու թվականը որոշ չէ: Վեպի չորրորդ մասում, սակայն մեջ է բերվում մի նամակ, որը ցույց է տալիս, որ խոսքը վերաբերվում է 1860 թվականին: Եթե 1860-ից հանենք 11—12 տարի, ապա ստանում ենք ճիշտ Արովյանի անհայտացման թվականը:

«Շահենն ի Սիրիօ» վեպում անշուշտ առկա է նաև Միքայել Նաբրանդյանը: Նա հանդեմ է դաշիս հատկապես վեպի վերջում, երբ Սիրիօում խոսում են աքսորյալների ոգիները: Նալբանդյանը այնուեղ գծադրված է շատ ավելի ամբողջական:

Նալբանդյանի ոգին Սիրիօում ասում է.

... Ես տնտեսական խնդիր հարուցի, յուրաքանչյուր մարդուն ապրելու չափի Հովի սեփականության իրավունք պետք է, ասացի և

¹ Ա. Տեր-Սարգսենց, «Շահենն ի Սիրիօ», բ. առ. Կ. Պոլիս, 1911, էջ 250.

սերության ու ժողովրդյան շահն այս միջոցավ կարող է բարեկարգել, ազնվական հողատիարք մատնեցին զիս իշխանության, թի մեր նորտեր, ստրուկներ մեր դեմ կդրանք իշխանության պաշտոնյայք դիս կանչելով ասացին.

— Լսեցինք թե երկրագործություն շատ կսիրես, ճրամմեն Սիրիր, ուզածիդ շափ հող կա հոն, վարե ու ցանե:

Սիրիրի ոգիների մեջ, մեր կարծիքով, առկա է նաև Արովյանը և Արովյանի ոգին է, որ ասում է՝

— Եվ ես իմ տառապյալ ազգի և Հայրենյաց վերեբ քննելու համար [եկա] և զիս վիրավորեցին, սև արծիվներ վրաս խոյացան. հանկարծ ազգին ու ընտանյացս գրկեն հափշտակեցին: Խոթա դեռ զիս կը փնտոինք:¹

Տեր-Սարգսենցը, որ ամբողջ վեպը գրել է Արովյանի «Վերթ»-ի աղդեցությամբ, «Շահնենի» մեջ ակնարկներ է արել Արովյանի անհայտացման մասին, չեր կարող Սիրիրում ցույց շտակ նրան, թե կուզ համոզված լիներ թե նա արսորված է: Անտարակուսելի է, որ «ազգի և հայրենյաց վերեբ բննոդ», ազգի ու ընտանյաց գրկից հանկարծ անհայտացողը Արովյանն է, որին դեռ «նոյն կը փրկնանենք»:

Մեր այս ենթադրությունը ավելի ևս հաստատում է Տեր-Սարգսենցի մի բանաստեղծությունը, որը նույնպիսի գնահատումն ըստ է ծանոթացնում «Հայստանի վերբ» պատմող հեղինակին, որին հափշտակել են «ընտանիքից և ազգից»:

Այդ բանաստեղծությունը, որ տարված է «Շահնենն ի Սիրիր» վեպից առաջ, 1875 թվին տպված «Վառարանի մը կայձեր» բազարական բանաստեղծությունների ժողովածուի մեջ, ունի հատկանիշ վերնագրով՝ «Ի հիշատակ և. Արովյանի»:

Այսուհետեւ երեսում է հեղինակի ամբողջ համակրությունն ու վերաբերմունքը դեպի մեծ լուսավորիչը:

Ամենից առաջ նկատենք, որ Տեր Սարգսենցը իր այդ ոտանակուրը գրելիս (1875 թ.) իր սեղանի վրա ունեցել է «Վերբ Հայստանի» վեպը և նրա թարմ տպափորության տակ է, որ գրել է այդ ոտանակուրը: Ի՞նչ հիմք ունենք այս ենթադրությունը անելու: Տեր Սարգսենցը իր ոտանակուրը սկսում է գրեթե այն տողերով, որ վերջանում է «Վերբ Հայստանին»:

«Վերբի» վերջին էջում կարդում ենք՝

¹ Սեղբակ Տեր-Սարգսենց, «Շահնենն ի Սիրիր», թ. տալ., էջ 278:

«Դերեզմանն կորած, հողումը թաղված,
Աչքից հեռացած, մտքից մռացած,
Իրանք անլեզու աշխարհս անիրավ,
Որ հայոց ազգիցն անթիվ ու անբավական բազ որդիք խլեց՝ չկշռացավ»¹

Տեր Սարգսեանցի ոտանավորն էլ սկսվում է այսպիս:

«Դերեզմանդ կորած,
Աչքից հեռացած,
Մտքից մռացված,
Դու ինքդ անլեզու,
Աշխարհս անիրավ,
Ոչ ոք չհարցուց
Թե խեղճ Աբովյանն
Ու ուրի գնաց կորավ»:
Ոչ սուրբ հիշատակդ
Սելտել կարացին,
Ոչ քարե արձան
Վրադ կանգնեցրին,
Արդյոք Հայոստանի
Վերբ պատմող մարդուն
Արտի թոքի մեջ
Զարկեցին դաշույն»:²

Այս տողերը շատ բնորոշ են: Աբովյանի անհայտացման առեղջևածը նույնքան իւստությամբ շարշարել է Տեր Սարգսեանցի միտրը, որբան շատ շատերին, սկսուծ Աբովյանի դասընկեր Առաքել Արարատյանից, վերջացրած մեր օրերի բանասերներուն: Տեր Սարգսեանցն էլ Աբովյանի անհայտացման բոլոր վերսիաները հիշուտակում է:

«Երևանի բերդն
Արդյոք թեղ ծածկեց,
Թե ապերտիստ Հրազդան
Քեզ մունջ կուլ տվից.
Արդյոք Սիրիոյն

1. Աբովյան, «Երկերի լինկատար ժողովածու», համագ., Երևան, 1948 թ., էջ 188:

2. Տեր-Սարգսեանց, «Հայութանի մը կայծեր», կ. Պուխ, 1875, էջ 15—16:

Խավարին երկիր
Մունչ խնդր ըրին
Քեզ ստարագիր»:¹

Աբովյանի անհայտացումից ուղիղ քառորդ դար Հետո Տեր-
Սարգսնացը դեռ չի հաշտվում, որ Աբովյանը մեռած է ու հեռա-
ցած այս աշխարհից և գրում է:

«Արդյոք մեռած ես,
Թե գեռ կենդանի,
Հլուսիսի սառույցը
Դեռ ոտքը կշափի,
Արդյոք արշային
Բեեռի վրա
Կանդմած կլսորհի՝² ս,
Թե երբ կկենա:
Ո՛չ, ո՛չ Աբովյան,
Ինչ որ առ լինիս,
Դու կենդանի ես
Թեպեսև խսպառ
Կորած կրսնն քեզ»:³

Տեր Սարգսնացը իր այս միտքը զարդացնում է Շնուկյալ ձե-
վով: Նա հավատացած է, որ Աբովյանի մոտքերը նախապատրաս-
տել են մի ամբողջ սերունդ, պալքարի են հանել ամբողջ հայ ժո-
ղովրդին և դրանով էլ կենդանի կմնա հավետ:

«Եթի արգելեն քեզ օդ չի շնչել,
Չոր աստված ավեր էր քեզ անարգել,
Եթի զբկեցին քեզ հայրենիքեղ,
Ընտանին և ազգի խլեցին գրկեղ,
Եվ եթի վաղ ևս մարմնույդ փոշիներ
Տիեզերքի մեջ ցրվեր կորցվեր,
Ո՛չ, ո՛չ Աբովյան, դու կենդանի ես
Խոսքով ու հոգով մեր սրտին մեջ ես,
Եվ մարմնույդ մեն մի փոշիի վրա
Յշմարիտ հայու սրտե արձան կամ»:⁴

¹ Ա. Տեր-Սարգսնաց, «Վառարանի մը կայձեր», Կ. Պուլս, 1875, էջ 15—16

² Նույն տեղում:

³ Նույն տեղում:

թալց ո՞րն է Տեր Սարգսենցի կարծիքով Արովյանի ամենատղիսավոր արժանիքը, Արովյանի ո՞ր գաղափարներն են համարապես նրան հրապարաւմ, որոնցով նա ցանկանում է դատիքարակել նոր սերունդներին: Այդ պարզուոչ երևում է «Ե հիշատակ եր Արովյանի» ոտանավորի վերջին տողերից:

«Ազոթն երկնից, որ քո փոշիներ
Եթե Արովյան չեն հարուցաներ,
Թող Նալբանդյաններ շնորհե հայ աղդին
Որ մեր ազգության անհաշտ թշնամին
Երբ աղվեսեն կփախչի
Կիստ գալիքը ունդիպի»:³

Պատահական չէ, որ Արովյանին նվիրված այս բանաստեղծոթյանը հաջորդում է «Խալբանդյանի ուխտը» ոտանավորը, որտեղ Տեր-Սարգսենցը առաջ է քաշում ազատության դադափարը և տարրեր բառերով ու արտահայտություններով ներկայացնում նաև բանդյանի ազատության երգը:

III

80-ական թվականներին առանձնատուիլ աշխատանք կատարվեց հայ ժողովրդի արևելահայ և արևմտահայ հատվածների միջև սերտ կապ ստեղծելու, նրանց գրականությունները փոխադարձար ծանոթացնելու գծով: Այս ուղղությամբ խոշոր դեր կատարեցին Կովկասում «Մշակ» թերթը, Կ. Պոլսում՝ «Արենլբ», «Մտսիս» և «Հայրենիք» թերթերը: Իսկ այս բոլորի մեջ էլ եղակի աշխատանք է կատարել Արփիար Արփիարյանը, որը խմբագրում էր Պոլսի վերոհիշյալ թերթերը և ամբողջ 30 տարի թղթակցել է «Մշակ»-ին:

Արփիարյանը մեծ գործ է կատարել ուսականությունը և այդ գրականության բարերար ազգեցությամբ զարգացող արևելահայ գրականությունը արևմտահայ ընթերցադներին ծանոթացնելու ուղղությամբ, առաջարկելով արևմտահայ գրողներին՝ հետեւ արևելահայ բնաշխարհիկ գրականության տրամփիցիաներին:

Արփիարյանի կարծիքով արևելահայ գրականության ամենամեծ առավելությունն այն է, որ նա միշտ կապված է նղել բուն երկրի հետ, ժողովրդի հետ: Արևելահայ գրողները իրենց երկրի

³ Ա. Տեր-Սարգսենց, «Վառարանի մը կայծեր», Կ. Պոլս, 1875, էջ 15—16^т

համար նյութ են բաղել անմիջապես ժողովրդի կյանքից, իրենք էլ դուրս են եկել այդ աշխատավոր ժողովրդի միջավայրից։ Նա հաճախ էր հիշում այդ փաստը ու հիշատակում Արովյանի, Պոռշյանի, Աղայանի անունները, որոնք ծագել են պյուղական միջավայրից։

Արփիարյանի համար պաշտամունքի առարկա են դարձել մասնագորապես Արևելահայ գրողներից երեքը՝ Միքայել Նազրանդյանը, Խաչատրու Արովյանը և Բագֆին։ Հատկապես առաջին երկուի մեջ է նա տեսել հայ ժողովրդի դարավոր պայքարի ճիշտ արձագանքը, այդ ժողովրդին դեպի մի որոշակի ապագա առաջնորդելու կոչումը։

Արփիարյանը, որ բազմաթիվ առիթներով տվել է ուսալիստական գրականության սկզբունքները, այն կարծիքին էր, որ գրողը ոչ միայն պետք է հարազատորեն, ճշմարտացիորեն արտահայտի օրեկտիվ իրականությունը, այլև ակտիվ կերպով միջամտի այդ իրականությունը վերափոխելու գործին, կարողանալ ոչ միայն իրականությունը իր հակասություններով ցուցադրել, այլ նպաստել այդ իրականության վերափոխմանը։ Խոսքը մասնավորեցնելով Արովյանի մասին, հայտնում է այն կարծիքը, որ Արովյանը՝ ինչպես նաև որիշ կովկասահայ գրողներ, շատ մոտիկից կապված է ժողովրդի հետ, իսկ գրականությունը ժողովրդի «բազմադարյան արժամտի վրա բնականորեն պիտի ծեր, ծաղկեր, ունճանար իր հյութը հայրենի հողեն ծծելով։ Արովյանն մինչև այսօր կովկասյան հայոց գրականությունը տուշմային զարգացմամբ կմնանա»։

Մի այլ առիթով Արփիարյանը նույն միտքը արտահայտել է հետեւյալ տողերով։

«Ի Կովկաս—Արարատ սակավաթիվ հայեր իրենց հզոր անհատականության դրոշմը զարկած են ժողովրդին սրտին ու մտքին վրա և առաջ բերած են սերունդ մը տմելո, կորովի։ Այդ հայերը եղան Արովյան, Նազարյանց, Նալբանդյանց, Գամառ Քաթիրա, Բագֆի և որիշներ»։¹

Արփիարյանը առանձին հողված չի դրել Խաչատրու Արովյանի մասին, բայց տարբեր առիթներով բազմաթիվ անդամ նրա արտահայտած մտքերը եթե ի մի բերենք, կարող ենք ասել, որ նա միանդամայն ճիշտ է ըմբռնել Արովյանի մեծությունը, «և երբ Հայաստանից վեպի տեղը հայ գրականության մեջ։

Նա ամենից առաջ Արովյանին ներկայացրել է որպես մեծ

¹ «Մասիս», 1890, թ. 3940.

Հայրենասեր, ամբողջովին իր ժողովրդին նվիրված, իր ողջ կարուցությունը և ուժը նրան տրամադրած մի գրող, որն ապրել է, շընչել բացառապես ժողովրդի համար, մտածել է նրա բարօրության համար:

«Արովյան ազգի սրտի հետ խոսեցավ իր ովերքովնա ժողովրդի բարրառով», — կտրուկ կերպով բնորոշում է նա:¹

Հիմնականում ճիշտ է նա քմբունի նաև «Վերք Հայաստանի» էտիմունը, Արփիարյանի կարծիքով «Վերք Հայաստանին» ոչ եմբուպական և ոչ էլ ասիական տիպի վեպիցի հետ պետք է համեմատել: Այն հայ ժողովրդի ամբողջ տառապանքն ու վիշտը, բռնադատիչների դեմ նրա պայքարելու անհողողութ կամքը արտահայտող մի դյուցազներգություն է, էպոպեա: Աղասին մի լեգենդար հերոս է, որի մեջ հայ ժողովուրդը դրել է իր ողջ արժանիքները և՝ Հայրենասիրությունը, և՝ Նվիրվածությունը, և՝ Ֆիզիկական ուժն ու կարողությունը, հումանիզմը: Արփիարյանի կարծիքով «Վերք Հայաստանի» դասել որպես սովորական սյուժեային մի վեպ, կնշանակի լըմբռնել այն ամբողջությամբ: Եզ միայն որպես դյուցազներգություն, որպես ժողովրդի կենդանի իզձերի խկական արտահայտություն է, որ կարողացել է «Վերք Հայաստանի» վեպը աղդել ամբողջ հայ ժողովրդի վրա, կատել նրան իր հետ, սիրել բոլորի կողմից: Ահա թե ինչու ոչ մի վեպ չի կարողացել կատարել այն, ինչ որ կատարել է «Վերք Հայաստանի» գիրքը:

«Արովյանի «Վերքը», — գրում է նա, — ամբողջ ժողովուրդ մը չնցած է, որտերը գալարած է և արդի գրականության նոր ուղի մը բացած է»:

Պահպանողական, ուսակցիոն տարրերի դեմ իր մղած երկարատեղ պայքարի տարիներին Արովյանը դարձել էր դրոշակ Արփիարյանի համար: Նա Արովյանի միջոցով պաշտպանել է աշխարհաբարը, աշխարհաբարի միջոցով՝ Արովյանին:

Եթե 50—60-ական թվականներին պահպանողական բանակը առասարակ զգուշանում էր Արովյանի անունը տալուց, իսկ 70-ական թվականներին հարկանցիուրին հիշում էր նրա անունը ու քմբիծադուլ վերաբերվում նրա «գուեցիկ» լեզվուն, ապա 80—90-ական թվականների լեզվապայքարի միջորկատ օրերին պահպանողական բանակն արդին նիզակներ էր ճոճում նաև Արովյանի դեմ: Աշխատ այս պայքարումն է, որ Արփիարյանը իր անդրադարձ նետերով

¹ «Մասիս», 1890, թ. 3940,

բոցում է Հակառակորդներին ու իր պաշտպանության տակ առաջ անմահ լուսավորվին:

900-ական թվականներին «Մասիս»-ի և «Արևելք»-ի մեջ բորբոքված լեզվապայքարի շրջանում, եթե գրաբարյաններից էժանուել եսայանը փորձեց Արովյանի անունն էլ հոլովիլ ու նրա լեզուն համարել ժարգոն, Արփիարյանը «Մասիս»-ի 1890 թվի № 3944-ում գրած իր մի հոդվածում անարգանքի սլունին գամելով կմանուել եսայանին, գրաւ էր.

«Եթե ովերբը» մեր սրտերը թունդ հանող այդ գիրը անհասկալի է, կհասկնա՞նք Վիրդիլիոսը»:

Ապա՝ Վիրդիլիոսի գրաբար թարգմանությունից մեջ բերելով մի խրթին ու անհասկանալի ցիտատ, շարունակում է.—

«Ելու տեսակ գրեթե աշակերտներու կրուտաք, դպրոցներու մեջ օտարներու բանաստեղծությամբն ու պատմոթյամբը կսուցանեք աշակերտները, կշարշարեք խեղճերը հասկնակու համար այս անհասկնալի տիմաբարանություններու գեղեցկությունը և կծաղրեք Արովյանը, որուն մեկ տողին իսկ արժանի չեն ձեր պաշտամ և մշակականը»։ և մանքը»:

«Ո՛չ, պրան, եսայան, «Եկերբը» ծաղրելու համար անսիրտ, անդուն ըլլալու է հայ մը»:
«Ենուայժմ այսբան»:¹

* * *

1880-ական թվականների վերջերից սաստկանում է Համիդյան ճնշումը, սահմանվում են աննկարագրելի պայմաններ, արգելվում է ազգային պիեսների բեմադրությունը, հայոց պատմության դասավանդումը դպրոցներում, մամուկի համար մշակվում են Հատուկ օրենքներ, որոնք արգելում են հարյուրավոր անմեղ բառերի գործածությունը: Կազմվում են նաև «անբարեհույս» տարրերի ցուցակները: Այդ ցուցակների մեջ մտած մարդկանց մասին հնարավոր չեր գրել ոչ մամուկում և ոչ էլ առանձին հրատարակությունների մեջ: Հիշյալ ցուցակների մեջ տեղ են գտնում ամենից առաջ պատմական անցյալի բոլոր հայ թագավորներն ու զորավարները՝ Տիգրան, Արշակ, Վարդան, Աշոտ և այլն Բանն այնտեղ է հասնում, որ անհնար է դառնում, նույնիսկ «Արշակ Բ.» պիեսի հիշատակումը մամուկում: և որպեսողի Հասկացվի Արշակ թագավոր:

¹ «Մասիս», 1890 թ., 3944:

թամբաղիրները դեն են գցում թշն, տպում են միայն Արշակ, ալ-սինքն՝ Արշակ էֆենդիի նման մի քանչ և Անբարե՞նույս տարրերից ցուցակների մեջ են մտնում նաև այն բոլոր հեղինակները, որոնք ազգային աղատագրական գաղափարներ են տարածել, պայքարի կող են արել ժողովրդին: Ցուցակների մեջ մտնում են հատկապես մի շաբթ արենելա՞այ գրողներ, առաջին հերթին Խաչատուք Աբովյանը, Միքայել Նալբանդյանը, Բագրին, Պատկանյանը և ուրիշներ:

1890-ական թվականների սկզբից այս գրողներից և ոչ մեկի անունը չի տպագրված արևմտա՞այ մամուլում կամ գրականության մեջ:

Այս պայմաններում առաջ հասկանալի է, որ Աբովյանի և Նալբանդյանի մասին խոսել բոլորովին անհնարին էր: Եթե 1870-ական թվականներին Միքայել Նալբանդյանի նկարը վաճառվում էր փողոցներում, ու զարդարում էր առաջավոր հայ մտավորականների սհնյակները, ապա այժմ աստիճանաբար այդ նկարները ցած են իշխում պատերից ու Տիգրանների, Վարդանների, Աշոտների նկարների հետ միասին կամ թաքնվում են սնդուկների մեջ և կամ հրո ձարակ դառնում: Ում տնից որ հայտնաբերվում էին այդպիսի նկարներ՝ աքսորվում էին 5—10 տարով:

Սակայն ինչքան սաստիանում էր ճնշումն ու հալածանքը, այնքան էլ ուժեղանում էր հայ ժողովրդի դիմադրությունը, բորբոքվում նրա ցասումը սուլթանի գեմ: Պատմության մեջ իր նախրնթացը շունեցող այդ դաժան սեժիմի պայմաններումն էլ հայ ժողովրդի առաջավոր մտածողները գունում էին պայքարի միջոցը, ժողովրդի հետ խոսելու ձեր: Գրողների, հրապարակախոսների ու ժողովրդի սրտերի մեջ ստեղծվում էր գաղտնի մի ճանապարհ, պայմանական մի լեզու:

Այսպիսով, 80—90-ական թվականներին արևմտա՞այ առաջավոր մտավորականները գիտարին, ծանր ու վտանգավոր մի պայքար են ակտում Համբայան բռնապետության դեմ: Յենգուրական խոտությունների առաջին տարիներին, երբ դեռ մեր թվարկած հեղինակների անունները վախճանելով կարելի էր հիշատակել, «Արենելք»-ը լույս է ընծայում Բագրիու «Խամսայի մելիքությունները» այն պարզ գիտակցությամբ, որ անուղղակի կերպով հայոց պատմության կուրսն է, որ անցնում է գաղտնի ճանապարհով Արփիարյանը՝ «Եռվկասյան հիշատակներ» անմենի վերնագրի տակ իբր թե պատմելով ուտեացիների ու կովկասյան ալլ ժողովուրդների

ավանդությունները, կոչ էր անում սիրել զենքը, սովորել այն գործածել թշնամու դեմ, պատրաստ լինել ապագա ճակատամարտերի Արքիարյանի գրակից ընկերներից Հռանդը, որ Կենտրոնական վարժարանում գրարարի դասաւոր էր, դադանի՝ առանց դասադրի, առանց գրավոր որմէ հետքի, միայն վատահայտության վրա, զգուշ անցնում էր հայոց պատմության կուրսու

Նույնը կատարվում էր բանասիրության մեջ Այրախսի մի ուշագրավ աշխատանք է կատարել Արրահամ Այվաղյանը, ցինզուրական ամենախստագույն պայմաններում հրատարակելով իր հրաք հասորանոց մի գործը՝ «Նար հայ կենսադրությանց» անձնղ վերնագրի տակ: Մինչև այժմ, որքան մեզ հայտնի է, ոչ ոք ուշագրություն չի դարձրել Արրահամ Այվաղյանի գրքի բուն նպատակի վրա: Նորա այդ աշխատությունը դիտվել է սոսկ որպես հայ նշանավոր դեմքերի կենսագրությանները պարունակող մի ուսումնասիրություն: Սակայն այդ երեք հասորների մանրամասն հետազոտումն ու ծանոթացումը ցույց է տալիս, որ Այվաղյանը հետապնդել է շատ որոշակի քաղաքական նպատակ, նախ տալ հայոց պատմության, նորագույն շրջանի պատմության կարևոր էջերը և խոսել այն հեղինակների մասին, որոնք իրենց ստեղծագործությամբ ու քաղաքական գործունեությամբ ակտիվ կերպով ազդել են հասարակական մտքի վրա:

Ի՞նչ հիմք ունենք մեր այս ենթագրությունը հիմնավորող: Ամենից առաջ մեր ուշագրությունը դրավել է հետևյալ փաստը: Այվաղյանը համեմատաբար թիշ տեղ հատկացնելով մի շարք աշբի ընկնող դեմքերի, ինչպիսիք են Ալամդարյանը, Թաղիթյանը և ուրիշներ, մոտ 200 էջ հատկացրել է Քիթապճի Մարգարին, որը ոչ ավելի, ոչ պակաս 19-րդ դարի սկզբներին գործող մի սովորական դրավաճառ է եղել, սիրել է գիրքը և անշուշտ որոշ աշխատանք կատարել է հայ ժողովրդի մեջ ընթերցասիրություն տարածելու ուղղությամբ: Ի՞նչպես է պատահել, որ Այվաղյանը 200 էջ նվիրել է Մարգարին:

Քիթապճի Մարգարին նվիրված այս 200 էջերի մեջ փաստորեն 3—4 էջ է հատկացված իրողոր առարկա հեղինակին: Ակնհայտնի կերպով Այվաղյանին զբաղեցրել է այստեղ ոչ այնքան Մարգարի կենսագրությունը տալու հարցը, որքան այդ ասիթով մանավանդ այրպիսի անվտանգ ու անվնաս մի դեմքի անվան տակ քննչնելով Համիդի ցենզորներին, ընդարձակ տեղեկություններ տալ մոտավոր

անցյալի հայ կյանքի ու կուլտուրայի նշանավոր ներկայացուցիչ-ների մասին:

Ծգուագործելով այս առիթը, Աբվազյանը մանրամասնորեն խո-սում է, ու ծանոթացնում Հնդկաստանի, Պարսկաստանի, Չինաս-տանի, Թուաստանի, Եգիպտոսի հայ գաղութերը, թե դրանք ինչ-պիսի կուլտուրական միջավայրեր են եղել, ինչպիսի հայկական դպրոցներ են ունեցել, ինչ հայ նշանավոր հնդինակներ ու գործիչ-ներ են ունեցել: Իսկ են կատարել այդ մարդիկ իրենց ժողովրդի համար, ինչ գրեթե են հրատարակել և այն: Այլ խոսքով այդ գաղութ-ների օրինակով, կոչ՝ Պոլսում ևս թեկուզ այդ պայմաններում կուլ-տուրական, ազգային լիբրածննդին նպաստող աշխատանք ծավա-լելու:

Բնթերցողը մի պահ մոռանում է, թե ինչ առիթով է խոսվում այս մասին: Միակ թույլ կապն այն է, որ Քիթարձի Մարգարը իր զբաղմունքի բերումով կապել է ունեցել բոլոր հայ գաղութների հետ, նրանցից ստացել է գրեթե կամ ուղարկել նրանց գրքեր:

Առհասարակ Համբդյան ցենզուրայի շրջանում եղապոյան այս լիգում շատ տարածված էր և այն կարելի է գտնել մատնավո-րակիս «Հայրենիք»-ի ու «Մասիս»-ի էջերում, նույնիսկ դասա-գրքերում:¹

Մոտավոր անցյալի պատմության այդ ուշագրավ էջերը ընթեր-ցողին հանձնելով հանդերձ, Արրահամ Աբվազյանին զբաղեցրել է Հատկապես իր հատորներում տեղ տալ Խաչատոր Աբովյանին ու Միքայել Նալբանդյանին, ոչ միայն անուղղակի, զարտուիդի ճանա-պարհով խոսել նրանց մասին, այլ հանգստություն ունենալ հատուկ պլումներ նվիրել այդ երկու խոշոր գիմքերին: Եվ այդ հաշողվել է նրան: Այլազյանը դիմել է խորամանկ միջոցի: «Չմեղանչելու հա-մար սովորական օրենքների դիմ, գեն է գցել Աբովյան և Նալ-բանյան վտանգավոր անունները ու իր գրքի գլուխներից մեկը լիբրնազրել է Քանաքեռցի Խաչատոր, մյուսը՝ Միքայել Պայտա-րյանը:

Երկու դեպքերումն էլ ցենզորները քիչ հիմք ունեին անհան-գըստացնելու Աբվազյանին: Քանաքեռցի Խաչատորն էլ շատ նման-

¹ Այսօրես, դասագրքերում հաճախ տպադրվում էր Մ. Նալբանդյանի երգ ազատության ուսանագորը անստորադիր և Ալատուրյանը՝ բառ էլ Ալեւատուրյանը՝ գարձած, կականը բազմացում էր: Ընթերցողները հեշտու-թյամբ ուղղում էին «սիալը» և ձեռքից ձեռք արտագրում:

Եր... Արշակ էֆենդում: Կարող էր լինել և երևանցի հաշատուր, թիֆիխսեցի հաշատուր: Ցենզորի համար միևնույն էր:

Այս երկու գլուխների մեջ Այվազյանը՝ խռովելով հաշատուր Աբովյանի և Միքայել Նալբանդյանի կյանքի և նրանց ստեղծագործության հիմնական գծերի մասին, երթեք չի գործածել Աբովյան կամ Նալբանդյան ազգանունները: Աբովյանը սկզբից մինչև վերջը մնացել է Քանաքենցի հաշատուր, իսկ Նալբանդյանը՝ դարձել Պայտարյանց, որ պարզ թարգմանություն է Նալբանդյան ազգանունը, մերթ էլ՝ Ղազարյան, որը ինչպես հայտնի է, Նալբանդյանի հայրանումն է:

Աբրահամ Այվազյանը հասկանալի է, որ չեր կարող բացարձակապես խռովել «Էկերը Հայաստանի»-ի մասին: Ամենից առաջ Հայաստան բառը արգելված 150 բառերից ցուցակի մեջ էր, հարավոր չեր գործածել այն տպագրված որևէ գործի մեջ, դրա համար էլ խռովագիրն միայն մի տեղ՝ թեթևակի ակնարկել է «Վերքի» մասին:

Մի տեղ Այվազյանը՝ Համարձակվելով գրքի անունը տալ, «Էկերքի» մասին խռովում է հետևյալ փակ ձևով: «Եռառ ժողովրդական լեզվով գրած զլխավոր երկասիրությունը, որ ի Տիգիս 1858-ին հրատարակվեցավ»,¹ իսկ մի այլ տեղ՝ Հայաստան բառը դեն զեկով, միայն «Էկերք» բառի հիշատակումով, խռովում է «Էկերք Հայաստանի»-ի մասին, այն համարում «անզուգական գիրք», և ասում, որ այդ գիրքը կարող է պայծառ լույս սփռել հեղինակի «կենաց վերքա»:²

Այվազյանը գրում է.—

«Ով կանգ շառներ Քանաքեսին առջև, որո մեջ ազդի ազդի տաղանդներ ծնան, ծեցան և անմահացան: Ո՞վ շսիրեր ողջույն տալ այն հարելին, յորում ծնավ մեծ Քանաքեսցին, շնչել այն օդը, զոր շնչեց նոր գրականության նահապետը, ըմպել այն ջուրը, յորմն քամբախոն գերմանական համալսարանականը կիսմեր և կդովանար և նստիլ այն մշտադաշտը մարդագետիններուն վրա, որը հաշիկն իր մանկության հիշատակներն անցուց ճժամախտի կամ ձնագնդի խաղերն և աշբակապուկն սարքելով»:³

Աբրահամ Այվազյանը մեծ դժվարությամբ, հզոպույան լիդով սակայն կարողացել է հասկացնել ընթերցողներին, թե նրանք

1 Ա. Այվազյան, «Շաք հայ կենսագրություն» Բ. էջ 84:

2 Նույն տեղում, էջ 85:

գործ ունեն մի մեծ հայրենասերի հետ, իր ժողովրդին, իր ազգին նվիրված մի գրողի հետ և որ օտար զաստիարակությունը, գերմանական համալսարանը չեն կարողացել Արտվանից խել տումբիկը, ժողովրդականը, հայկականը, թէ Գերմանիայումն էլ նա մնացել է հայ, իսկ հայրենիք վերադառնալուց հետո առավել ևս դրսկորմել է նրա հայկական ոգին: Այս բոլորը Այլվագյանը տվել է շատ ահզմ ու խուափող մի նախադասությամբ: «Խաչառուր օդ և երկիր փախելով, սիրո և հոգի փոխողներն չերա:»²

Այս է ամբողջ Արտվանի մասին գրվածը:

Գրեթե նոսյնպիսի գրուշությամբ Այլվագյանը խոսել է Միքայել Ղազարյան Պայտարյանցի մասին, հենց սկզբից անելով հետևյալ վերապահումը:

«Ե՞ր բոլոր կենասպական անձերուս մեջ թերևս չկա մեկը, որ այնքան մտածել տա գրողն, որովհետեւ ամենեն հզոր և ամենեն խորին խորաթափանց միտքն եղած է առ մեզ նոր նախիջևանի արծիվն արհամարհվող Մովսալ, կամ Միքայել Ղազարյանու:»³

Այլվագյանը անհամեմատ ավելի ընդարձակ կենասպական տեղեկություններ է տվել Նալբանդյանի վերաբերյալ, խոսել է նրա ընական դիտություններով հետաքրքրովներու մասին:

Նա գրում է.

«Ավելի բառ շինող էր, բան բառ գտնող, թեև հետամուս էր միշտ գավառաբարբառին, Քանաքեցի հաշատուրին պես, որո վեան բառերու շտեմարան է, Արարատյան Աղեքսանդրի պես, որ զրած է «Հիմնարկուրյուն գավառական ուսումնաբանի» վեպը, լիզվարաններու ուշ և ուրուշը գրաված է:»⁴

Խոսելով Նալբանդյանի արտասահմանյան գործունեության մասին, Աբրահամ Այլվագյանը մեջ է զցում Մ. Բաբաջանյանի կտակի պատմությունը և զարմանալի հանդգնությամբ, խոսում է Նալբանդյանի լոնգոնյան գործունեության մասին, թէ նա «Զանդակար» լրագրույն խմբագրապետին հետ խորհրդակցություն մը կը-կատարի: Այլվագյանը վստահ էր, որ սուլթանական տիսմար ցենդորը երբեք չէր կարող զլխի ընկնել, որ Զանգակը Գերցենի օրդան «Կողոկողոն» է, իսկ Գերցենն էլ ուսւ ոհեղուցիոն էմիգրանտ է,

¹ Ա. Այլվագյան. «Ետք հայ կենասպառությանց» Բ. էջ 78:

² Նույն աեղում, էջ 82:

³ Նույն աեղում, էջ 98:

⁴ Նույն աեղում:

որի գործունեության հիշատակումը մահվան սպառնալիքով արգելված էր:

Անշուշտ Արվազյանի հիմնական նպատակը եղել է խռովել նալբանդյանի «Ազատության երդօքի մասին», որը արևմտահայության ամենասուբելի երգն էր ու ցեղազորական խստություններից առաջշարժնակ արտասանվում էր բեմերից, խռովել նրա «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» գործի մասին, որը հայ երիտասարդները արտագրելով՝ ձեռքից ձեռք անցկացնում ու պահում էին իրենց բարձերի տակի:¹ Հարավորությունը շունենալով այս երկու գործերի մասին խռովել, Այլվազյանը «Ազատն աստվածը» հիշատակում է հոգեշունչ երգ արտահայտությամբ, իսկ «Երկրագործության» մասին հազիր կարողանում է գրել հետևյալ տողերը, առանց գրքի անունը տպառ:

«Պայտարյանցի ամենն ավելի ապածված և ժողովրդականություն վաստակած երկն ընկերաբանական մեկ գործն է, որ յուր տնտեսագիտական տեսակետովը ժամանակին գնահատված և պուլիցիոնոցը համարված է»:

Այսքանն էլ բավական էր, որ և Արրահանձ Այլվազյանը և իր ժա-

1 Թե՛ Մ. Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ հանուպարհ» գիրը ինչպիսի խոշըր ազգեցություն է թողել արևմտահայ երիտասարդության վրա, երեսում է հնուել ընորոշ փաստից: Եթե 1888 թվին կ. Պոլում լույս տեսակ Մ. Հավանանիսյանի «Միութանք ուսմկին» բանաստեղծությունների ժողովածան, որտեղ տուշին անդամ բանաստեղծության նյալթ էր դառնում բանվորի ու արհեստավորի կյանքը, երգում էր աշխատանքը, առաջադիմական մամուլը ողջունելով այդ երեսութը, ցույց ավելից, որ Մ. Հավանանիսյանի գրական ուղղությունը տարբեր ակունքներ ունի, և որ պետք է հնուել այդ ուղղության:

Ա. Արքիարյանը Մ. Հավանանիսյանի հիշյալ գրքի մասին գրած գրախոսականում կատարել է ուշագրված մի խոսութանություն: Արքիարյանը գրում է.

«Հազիվ ութ տարեկան էր Միհրանիկ, հայրը քովն առած զնոս կը կարդար զիրք մը, որմեջտպան շատ բան չեր հասկնար, բայց հորը խրատներ կը միավելին անոր մտքին մեջ: Տղան, մտիկ ըստ այս գրքին խռովերուն, եթե մեծասա, շարունակ տշխատե, ուրիշներուն ալ միշտ աշխատություն քարոզի: Մեր ազգին կյանքը արվեստն է, հողագործությունն է: Պատանին երիտասարդ եղավ, ոչ հորը խրատները մռացավ, ոչ աւ այդ գիրքը նվ ով մեզմե մռացած է զայն: Այդ գրքին անունն էր «Երկրագործությանը իր ուղիղ հանուպարհ» հեղինակին անունն էլ Միհրայի Նալբանդյանը: («Արմենիք», 1888 թ № 1389):

Բայց այս եղավ Նալբանդյան անվան վերջին հիշատակումը պալստիք մամուլում մինչև 1908 թվականը:

Հանաւակակից մտածողները իրենց նպաստակին համեմին: Էականը՝ մտքելը հրահրելն էր, հայրենասեր երթասարդությանը Աբովյա-նի և նալբանդյանի իդեաները հիշեցնելը: Նրանք՝ առանց այն էլ բանափոր և գաղտնի կերպով շարունակում էին կարդալ և արտա-դրել այդ երես մեծ գեմքերի աշխատությունները: Մամուլը, պար-բերական հրատարակությունները ցանկանում էին ուղղություն տալ հիշեցնել որ ցենզուրական խստությունների ժաման տարիներին էլ սիետը է շարունակել կարդալ Աբովյան և նալբանդյան, որոնք պայքարի կոչ էին անում հայ ժողովրդին:

Աբրահամ Արվազյանի գրքի լույս ընծայումից հետո անհրա-ժեշտ էր, որ առաջադիմ մամուլն էլ իր խոսքն ասեր, իր վերաբեր-մունքը ցույց տար այդ գրքի նկատմամբ, ուշադրություն ըստուեր նրա հատկապես այս կամ այն հատվածի վրա: Նոյնքան դժվար էր այդ դործը, որքան սեար հայ կենսագրությանցը» հրատարակե-լը, սակայն Արփիարյանը կարգանում է այդ անել: Հակառակ պահպանողական մամուլի խոռորդավոր լուսթյանը, Արփիարյանը «Հայրենիք» օրաթերթի 1893 թ. № 464-ի առաջնորդողի մեջ խոսում է Աբրահամ Արվազյանի հրատարակած երեք հատորիների մա-սին, ծանոթացնուած է նրանց բովանդակությանը, դեռ ու գեն ընկ-նելով, ցենզորների ուշադրությունը տարբեր կողմեր գրավելով, հանգում է այն եղբակացության, որ «Այն մանրավեպերու, նկա-րագրություններու, հոգեկան վիճակներու խառնուրդին մեջ երկու պատիկ կետեր մեր ուշադրությունը կդրավեն, որովհետև մեծ ու մեծ ակզբունքներու վրա հիմնված են: Առաջինը կմերաբերի Թա-նարեոցի հաշատուրին: Այդ շահեկան մեծ գեմքը մասնավոր շողով մը կը փայլի այն մութին մեջ, ուր կորաված է և իր վրա բերնե թերան լսված պատմությունները արի ու վեհ հոգիի մը տեղը կու-տան իրեն՝ մեր մեջ: Ամենեն առաջ ինքն է, որ հասկցած է ժո-ղովրդական լեզվին ինչ հարուստ գանձարան մը ըլլալը ու այդ լեզվով երգած է ընտանեկան անոր ուրախություններն ու վշտերը: Հանկարծական բան մը չէ այդ բերումն իր մեջ, այլ երկարատև խորհրդածության ու զատողության արդյունքու»:¹

Ապա մի քանի խոսք էլ ասում է Աբովյանի գորագույան շըր-ժանի մասին և հիշեցնուած, որ Գորպատում էլ նա միշտ մտահոգվել է բացառապես իր ժողովրդի հոգսերով ու վիճակով:

Գուցե ավելորդ չի լինի այստեղ մեջ բերել նաև նալբանդյանին նվիրված հատվածը, որը, որքան մեզ հայտնի է, Աբրահամ Արվա-զյանի վերոհիշյալ փորձից հետո երկրորդ հիշատակումն է ամբողջ